

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱԲԵՐԸ

**Նվիրվում է Գևորգ Դերիկյանի ծննդյան 80
և հայոց հերոսամարտերի 100-ամյակներին**

Ե Ր Ե Վ Ա Ն – 2017

Տպագրվում է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական
ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ:

Խմբագիր՝ Լիլիթ Հովսեփյան
բան. գիտ. թեկնածու, դոցենտ

«Հայրենասիրության պատգամաբերը» հոդվածների ժողովածուն անդրադառնում է XX դարի վերջին տասնամյակների տաղանդավոր արձակագիր, հրապարակախոս Գևորգ Ղերիկյանի մի քանի ստեղծագործություններին՝ դրանք ներկայացնելով գրականագիտական և ուսուցողական դիտակետից:

Ժողովածուն օգտակար է բանասիրական ֆակուլտետի ուսանողության և հայ գրականության ուսուցիչների համար:

ՆԱԽԱԲԱՆ

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը կարող է հպարտ լինել այն իրողությամբ, որ իր շրջանա-

վարտներից մի հիանալի աստղաբույլ հարստացրել է XX դարի երկրորդ կեսի հայ գրականության թե՛ արձակի, թե՛ քնարերգության և թե՛ թատերգության բնագավառը: Այդ երանելի անուններից է Գևորգ Դերիկյանը, որը բուհն ավարտել է 1961-ին, այնուհետև զբաղվել է լրագրողական և խմբագրական աշխատանքով: Նա եղել է «Սովետական գրող» հրատարակչության գլխավոր խմբագիրը, նույն պաշտոնը վարել է նաև «Արևիկ» հրատարակչությունում: Ցավոք, 1996-ից նա այլևս մեզ հետ չէ, բայց մեզ հետ է իր թողած հարուստ գրականությունը: Այսօր Գևորգ Դերիկյանը կլիներ 80 տարեկան...

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը սիրով Գևորգ Դերիկյանի հոբելյանին է նվիրում «Հայրենասիրության պատգամաբերը» խորագրով հոդվածների ժողովածուն, որում խիստ ինքնատիպ ձևով ներկայացվում են նրա երկու վեպերը, «Հայոց մեծերը» գիրքը, երկու պատմվածքները և նրա հրապարակախոսության մի դրվագը, որոնք բոլորն էլ իրենց ուղղվածությամբ համապատասխանում են մեր ամբիոնի ոգուն:

Թեպետ Գևորգ Դերիկյանը երբեք չի աշխատել որպես մանկավարժ, սակայն նրա գրվածքներն առաջնահերթ են հենց մանկավարժական առումով: Հայ միջնադարի մեծերին

հետևելով՝ Դերիկյանը հայ աշակերտի և ուսանողի մեջ հայ-
րենասիրության սերմեր է ցանում. դրանք առողջ սերմեր են
և խոստանում են նորանոր բերքառատ պարգևներ: Գ.Դերիկ-
յանի արձակը միշտ լինելու է ժամանակակից, որովհետև ազ-
գապահպանման խնդիրը, կրթված, մարդասեր, գիտուն, աշ-
խատասեր լինելը հասկացություններ են, որոնք ժամանա-
կային սահմանափակում չունեն:

Պրոֆեսոր Աելիտա Դուլուխանյան

PREFACE

The Philological Faculty of the Armenian State Pedagogical University after K. Abovian can be proud that a constellation of its graduate students has enriched the Armenian literature of the second half of the 20th century either in the field of prose or lyrics and theatre. Among these celebrated names one must mention Gevork Devrikian who graduated from the University in 1961 and then devoted himself to journalism and editing.

He was chief editor of the publishing house “Sovetakan Grogh” (“Soviet Writer”) and had the same post at the publishing house “Arevik”. Unfortunately, in 1996 he passed away, but left us his rich literary heritage. Now, Gevork Devrikian would have been 80 years old...

The Chair of old and medieval Armenian literature and the methods of its teaching dedicates with love to the anniversary of Gevork Devrikian a miscellany of articles under the title *The Messenger of Patriotism*. It presents very originally his two novels, his book *The Great Armenians*, two stories and a fragment of journalism, all of which are matching the spirit of our Chair by their orientation.

Even if Gevork Devrikian never had any pedagogical activity, his works are important namely from the pedagogical point of view. Following the example of the Middle Ages great representatives, Devrikian sows the seeds of patriotism in the soul of Armenian pupils and students. These are healthy seeds and no doubt they will give new and abundant sprouting. Devrikian's prose will always be up to date, as the issue of nation conservation, to be educated, humanist, knowing and laborious are notions that do not have any time limit.

Professor Aelita Dolukhanyan

ПРЕДИСЛОВИЕ

Филологический факультет Армянского Государственного Педагогического Университета имени Х. Абовяна может гордиться тем фактом, что прекрасная плеяда его выпускников обогатила армянскую литературу второй половины XX века в области и прозы, и лирики, и драматургии. Среди этих славных имён можно назвать Геворка Девриkyяна, окончившего вуз в 1961 г., а затем занимавшегося журналистикой и редакторским делом. Он был главным редактором издательства «Советакан Грох» («Советский Писатель») и занимал тот же пост в издательстве «Аревик». К сожалению, с 1996 г. его с нами больше нет, но у нас осталось его богатое литературное наследие. Сегодня Геворку Девриkyяну исполнилось бы 80 лет...

Кафедра древней и средневековой армянской литературы и методики её преподавания с любовью посвящает юбилею Геворка Девриkyяна сборник статей под названием «Благовестник патриотизма», в котором весьма своеобразно представлены его два романа, книга «Великие армяне», два рассказа и фрагмент публицистики, которые все по своей ориентации соответствуют духу нашей кафедры.

Хотя Геворк Девриkyян никогда не занимался педагогической деятельностью, но его труды первостепенны именно с педагогической точки зрения. Следуя примеру великих

представителей средневековья, Деврикян сеет семена патриотизма в душе армянских учеников и студентов. Это здоровые семена и обещают дать все новые обильные всходы. Проза Деврикяна всегда будет актуальной, поскольку вопрос сохранения нации, быть образованным, гуманным, знающим и трудолюбивым – это понятия, не имеющие ограничения во времени.

Профессор Аэлита Долуханян



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ «ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԸ»

ԳՐՔԻ Ա ՀԱՏՈՐԸ

«Ուսուցչի ազդեցությունը հավիտենական է»:

Ասացվածք

Գևորգ Դևրիկյանի «Հայոց մեծերը» գիրքը, որ ունի Ա և Բ հատորներ, կարելի է կոչել դպրոցական յուրօրինակ հանրագիտարան: Գրքի Ա հատորը լույս է տեսել 2012 թվականին, երբ հեղինակն արդեն կենդանի չէր: Գրքի սկզբում գետեղված է նրա որդու՝ բանասիրական գիտությունների դոկտոր, հիանալի միջնադարագետ Վարդան Դևրիկյանի «Հայոց

մեծերը և հայրս» շնորհակալական նախաբանը, որում կարողում ենք. «Մեր դասական մի շարք հեղինակների ստեղծագործություններ, լինելով իրենց ժամանակի ազգային իղձերի կենդանի արտահայտությունը, ընթերցողների սրտերը կհուզեն նվազագույնը այնքան ժամանակ, քանի դեռ չեն իրականացել այդ իղձերը, որոնց մերօրյա մի արտահայտությունն է ընթերցողներին ներկայացվող «Հայոց մեծերը»:¹

Գրականության ցարդ հայտնի ու երկարաժամկետ թեմաներից է հայրենասիրությունը, որը մեր գրականության մեջ զարկերակային իմաստ ունեցավ հենց Մաշտոցյան գրականության արշալույսին:

Կորյուն վարդապետը Մեսրոպ Մաշտոցի, Ագաթանգեղոսը Տրդատ Մեծի, Փավստոս Բուզանդը Մամիկոնյան սպարապետների, Մովսես Խորենացին Հայկի, Արամի, Տիգրանի, Եղիշեն Վարդան Մամիկոնյանի, Ղազար Փարպեցին Վահան Մամիկոնյանի կերպարներով ապագա հայ սերունդների համար կերտեցին ընդօրինակման արժանի այնպիսի կերպարներ, որոնք երբեք չմոռացվեցին:

Ոսկեդարի այս ավանդույթը շարունակվեց հետագա դարերում: XV դարի նշանավոր բանաստեղծ Հովհաննես Թլկուրանցին իր «Տաղ քաջի Լիպարտին» քերթվածն ավար-

¹ Գ.Դերիկյան, Հայոց մեծերը, Երևան, 2012, էջ 5:

տում է ապագա հայ սերունդներին ուղղված հետևյալ պատգամով.

Քաջ Լիպարիտն ու սիր Յոհան
Քրիստոնէից համար մեռան:

Յորտեղ նստին հաց լ՛ ի սեղան,
Ժողովք բազում և շատ իշխան,
Յիշեն զնա սուրբ քահանայք,
Տէր ողորմի, ասեն նրմա:²

Գևորգ Դերիկյանը Հայոց մեծերին ներկայացնում է հեթանոսական ժամանակներից ու հասցնում է նոր օրերի նշանավոր դեմքերին: Նա էլ Ստեփանոս Նազարյանի նման համոզված է. «Հայոց ազգը կորած չէ. նա ունի աշխարհի հրապարակի մեջ կատարելու մի օր մի մեծ ու գեղեցիկ խորհուրդ»:³

Գ.Դերիկյանը «Հեղինակի կողմից» գրքի նախաբանում բացատրում է, թե ինչու տարբեր տարիների ընթացքում համառոտ ու հստակ բնութագրել է Հայոց մեծերին ու նրանց գործերը: Նրա նպատակն է եղել բարձր դասարանների աշա-

² Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, Աշխատասիրությամբ՝ Էմ. Պիվագյանի, Երևան, 1960, էջ 203-204:

³ Ստ. Նազարյան, Երկերի ժողովածու, Երևան, 1996, էջ 259-260:

կերտներին առավել հանգամանալի ծանոթացնել հայրենի մշակույթի ու պատմության գործիչներին:

Խոստովանենք, որ բոլոր ակնարկներն ու էսսեները հանրամատչելի են, սակայն հեղինակը ծանոթ է գիտական վերջին փաստերին ու մատուցում է նաև դրանք: Այդօրինակ ձեռնարկը սկսելու հիմնական ազդակներից մեկն էլ եղել է Գարեգին Նժդեհի հետևյալ պահանջը. «Պետք է վերապրել և վերամիավորել հայրենի պատմության ողջ հոլովույթը»:⁴

Գ.Դևրիկյանը խորքով ծանոթ է ներկայացվող մեծերի գործերին և օգտվել է նրանց շուրջ ստեղծված գրականությունից, սակայն այդ ամենին նա գումարել է սեփական դիտարկումներն ու կարծիքները, որոնք, անշուշտ, խիստ ուշագրավ են, և որոնք ես հատկապես առանձնացրել եմ:

Տիգրան Մեծին բնորոշելիս նա չի մոռանում նշել, թե վերջինիս պատկերով ոսկյա ու արծաթյա դրամներ են հատվել ոչ միայն Հայաստանում, այլև հարևան երկրներում: Սա շատ կարևոր դիտարկում է, որովհետև այդ դրամները ցուցադրված են աշխարհի բազմաթիվ նշանավոր պատկերասրահներում, այդ թվում նաև Լոնդոնի Բրիտանական թանգարանում: Տիգրան Մեծի դրամները մեր վաղնջական պետականության խոսուն վկաներն են, որոնք իրենց գոյությամբ

⁴ Գ.Դևրիկյան, Հայոց մեծերը, էջ 7:

սպառիչ ձևով պատասխանում են Հայաստանի պատմական անցյալը խեղաթյուրողներին:

Երբեք չի կարելի մոռանալ, թե ինչ է ասել ֆրանսիական ակադեմիայի անդամ Ռընե Գրուսեն Նիկողայոս Ադոնցի ֆրանսերեն լեզվով լույս տեսած „Histoire d'Arménie. Les origines du X siècle au VI (Av. J. C)” գրքի առաջաբանում: Գրուսեն գրում է. «...Տիգրանը իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավիտենականության համար»:⁵

Գևորգ Դերիկյանի ողջ ստեղծագործությունից պարզորոշ երևում է, թե որքան հարազատ է նրա էությանը ոսկեդարի հայ պատմությունն ու մատենագրությունը, որոնք կերտողները «Հայոց մեծերը» գրքի առաջին դեմքերն են՝ Մ.Մաշտոց, Մ.Պարթև, Գրիգոր Լուսավորիչ, Կորյուն վարդապետ, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Եղիշե, Ղազար Փարպեցի: Ահա այս անունների մեջ է գրողի սիրելիներից մեկը՝ Մովսես Խորենացին, որը հայ ժողովրդին նվիրեց նրա Ծննդոց գիրքը, որի մասին Դերիկյանը գրում է. «Ու որքան հիացող էր նախնյաց գործերով, այնքան էլ զգաստ ու սթափ էր գրավոր վկայությունների ու բանավոր ավանդ-

⁵ Ն.Ադոնց, Երկեր հինգ հատորով, Դ, Քննական պատմություն Հայոց, Երևան, 2009, էջ 29:

վածների հանդեպ ու ոչ մի անստույգ բան չգրեց իր մատ-
յանում»:⁶

Այսպիսի գիտելիքը խիստ կարևոր է, քանզի մինչև
հիմա էլ կան գիտնականներ, որոնք Մովսես Խորենացու ապ-
րած դարը տեղափոխում են VIII և IX դարեր:

Մովսես Խորենացու դատը պաշտպանել են բազմա-
թիվ եվրոպական հայագետներ: Դրանցից են ֆրանսիացի
Վիկտոր Լանգլուան և անգլիացի հայագետ Ֆրեդերիկ Կոնի-
բերը: Վիկտոր Լանգլուայի մոտ կարդում ենք. «Կգա մի օր, որ
գիտական Եվրոպան նրան կհայտարարի Մե՛ժ՝ իր ապրած
ժամանակի համար, կգա մի օր, որ մեր պատմաբանին մե-
ղադրողները կարդարացնեն նրան»:⁷

Ֆրեդերիկ Կոնիբերը XX դարի սկզբին հրատարակեց
„The date of Moses of Khoren” («Մովսես Խորենացու թվակա-
նը») ընդարձակ հոդվածը, որում ծանրակշիռ փաստերով հե-
ղինակն ապացուցում է, թե Խորենացին V դարի պատմիչ է:⁸

Մեր օրերում Խորենացու ապրած ժամանակին և նրա
«Հայոց պատմության» աղբյուրներին հմուտ և հիմնավոր
անդրադարձ ունի Ալբերտ Մուշեղյանը «Մովսես Խորենացու

⁶ Գ.Դերիկյան, Հայոց մեծերը, էջ 83:

⁷ V.Langlois, Etude sur les sources de l’Histoire d’Arménie de Moise de
Khoren, Paris, 1861, p. 101.

⁸ Տե՛ս «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1902, էջ 1-6, 85-90:

դարը» ծավալուն հետազոտության մեջ, ուր նա եզրահանգում է. «Մովսես Խորենացին աներկբա պատկանում է V դարին, և նրա ստեղծած դասական երկը՝ «Պատմութիւն Հայոց»-ը, հայ ժողովրդի պատմական կենսագրության այդ բացառիկ բախտորոշ ժամանակաշրջանի արգասիքն է»:⁹ Հենց դրա համար էլ Գևորգ Դերիկյանը Խորենացուն նվիրված հոդվածը կոչել է «Պատմահոր սխրանքը»:

Գևորգ Դերիկյանը լուրջ փաստեր է բերում, որով հիմնավորում է, թե ինչու Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունը» անվերապահ համարում է հայ միջնադարյան գրականության դրսևորում: Հենց դրա համար էլ նա իր հոդվածն անվանել է «Արցախական աշխարհի սիրով»: Նա չի մոռանում նշել, թե Կաղանկատվացու հետևությամբ հետագայում գրվեց Թովմա Արծրունու Արծրունյաց տան պատմությունը, Ստեփանոս Օրբելյանն էլ մեզ է ավանդել Սյունյաց տան պատմությունը. «Այո՛, Մովսես Կաղանկատվացին մեզ է թողել մի շատ կարևոր երկ, որի հիմնական նպատակը եղել է Ուտիք – Արցախի պատմությունը միահյուսել մայր երկրի պատմությանը»:¹⁰

Զմոռանանք՝ Մովսես Կաղանկատվացու պատմության գրական հատվածներից է Հոնագուրի ու Բաբիկի մենա-

⁹ Ա.Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, էջ 341-342:

¹⁰ Գ.Դերիկյան, Հայոց մեծերը, էջ 109:

մարտի տեսարանը, որը Կաղանկատվացին քաղել է Պետրոս Սյունեցու պատմությունից:¹¹

Նշանավոր միջնադարագետ Ասատուր Մնացական-յանը 1969-ին ռուսերենով հրատարակեց մեծարժեք մի հետազոտություն, որը գիտականորեն ապացուցեց, թե այսօրվա Ադրբեյջանի տարածքի մեծագույն մասը Մեծ Հայքի պատմական տարածքն է, և այնտեղ ստեղծվել է հարուստ հայ գրականություն, որի մեջ է մտնում նաև Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմություն» երկը:¹²

Հայ պատանիներին ու երիտասարդներին Գ.Դերիկյանը տեղեկացնում է, թե վաղ միջնադարում հայ կինը ոչ միայն կրթված էր, այլև գրում էր բանաստեղծություններ: Ժամանակը մեզ համար պահպանել է ութերորդ դարից եկող երկու լուսավոր անուններ՝ Սահակդուխտ Սյունեցի և Խոսրովիդուխտ Գողթնացի: Նրանց գրած շարականներն ունեն ճանաչողական ու գեղարվեստական արժեք:

Խոսրովիդուխտ Գողթնացին իր շարականը նվիրել է հարազատ եղբորը՝ Վահանին, որին արաբները հայ այլ նշանավոր ազնվականների որդիների հետ գերի էին տարել ու

¹¹ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղվանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 109-111:

¹² Տե՛ս А.Ш.Мнацаканян, О литературе Кавказской Албании, Ереван, 1969.

մահմեդականացրել. «Այս փոքրիկ շարականի մեջ բանաստեղծուհին կերտել է Վահան Գողթնացու՝ հայրենասերի ու նահատակի բարձր կերպարը, նրա արարքի հերոսականությունը»:¹³

«Հայոց մեծերը» գրքի Ա հատորում հեղինակը զետեղել է հայ միջնադարյան մատենագրությունը ներկայացնող բոլոր հայ պատմիչներին՝ Սեբեոս, Ղևոնդ, Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Արիստակես Լաստիվերցի, Ստեփանոս Ասողիկ, Մատթեոս Ուռհայեցի, Վարդան Արևելցի, Ստեփանոս Օրբելյան, Առաքել Դավրիժեցի:

Հստակ բացատրվում է, թե ինչու միջնադարի որոշ հայ պատմիչներ իրենց երկերը կոչել են տիեզերական պատմություններ: Ստեփանոս Ասողիկ Տարոնեցու մասին ասվում է. «Նա իհարկե, մեծապես անդրադառնում է և հայոց կաթողիկոսներին ըստ հաջորդականության, չի սահմանափակվում միայն Հայաստանի պատմությամբ, այլև նրան է միահյուսում շատ դեպքեր և իրադարձություններ, որոնք կատարվել են հարևան երկրներում: Ահա թե ինչու է իր պատմությունը կոչել տիեզերական»:¹⁴

Բնականաբար հայ ժողովրդի պատմության հիանալի գիտակ Գ.Դևրիկյանը պատմագրությունից բացի խոսել է

¹³ Գ.Դևրիկյան, Հայոց մեծերը, էջ 127:

¹⁴ Նույն տեղում, էջ 164:

նան այլ բնագավառների՝ փիլիսոփայության, նկարչության, բանաստեղծության, ճարտարապետության, տպագրական գործի, ազգային-ազատագրական շարժման, գիտության բնագավառների Հայոց մեծերի մասին:

Հայ բանաստեղծության գագաթը եղել և մնում է հանձարեղ Գրիգոր Նարեկացին, որի գրական փառքը գնալով արժանանում է միջազգային ճանաչման ու գնահատանքի: «Հայ բանաստեղծության հսկան» խորագրով հոդվածում Դերիկյանն անդրադառնում է Գրիգոր Նարեկացու կյանքին, տաղերին ու «Մատեան ողբերգութեան» երկին:¹⁵

Բելգիացի հայագետ Ֆելիքս Ննն ասում է, թե հայերը Գրիգոր Նարեկացուն համարել են «հրեշտակ ի մարմին»: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ 1173թ. Գրիգոր Սկևռացին Գրիգոր Նարեկացու մանրանկար դիմանկարի տակ մակագրել է «Սուրբն Գրիգոր ճգնաւոր»: Գ.Դերիկյանը երախտագիտության խոսք է ուղղում 1985թ. Երևանում լույս տեսած «Մատեան ողբերգութեան» երկի քննական բնագրի կազմողներին: Ահա թե որն է Գ.Դերիկյանի՝ Գրիգոր Նարեկացուն տված վերջնական բնութագիրը. «Դա իրո՛ք բանաստեղծական ճոխագույն լեզու էր, որը մեծապես հարստաց-

¹⁵ Գ.Դերիկյան, Հայոց մեծերը, էջ 151: Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ.Մ.Խաչատրյանի և Ա.Ա.Ղազինյանի, Երևան, 1985:

նում էր ոսկեղենիկ մայրենին: Եվ այդ բոլորով էր, որ Նարեկացին դառնում է մեր բանաստեղծության չգերազանցված հսկան...»:¹⁶

Միջնադարի հայ բանաստեղծներին նվիրված ակնարկներն ու էսսեները նույնպես պահպանում են ժամանակագրական կարգը և ավարտվում են ուշ միջնադարի հանճարեղ բանաստեղծով՝ Սայաթ-Նովայով: Անդրադառնալով Սայաթ-Նովայի կյանքին ու խաղերի հիմնական թեմաներին՝ Գ.Դևրիկյանը եզրահանգում է. «Այսպես գնաց այս աշխարհից նրա մեծագույն սիրերգակներից ու ըմբոստ հոգիներից մեկը: Սակայն նրա սիրո այդ շքեղ ծիածանը, որ սկիզբ առնելով հեթանոս ժամանակներից՝ հասել է մինչև Չարենց ու մեր օրերը, դեռ շատ դարեր տեսանելի կլինի սերունդներին ու նրանց հիացմունքը կշարժի, քանզի նրա «գիրն ուրիշ գրեն է», սերը՝ ուրիշ սերեն»:¹⁷

Իր պատմվածքների, վեպերի, հրապարակախոսության մեջ Գ.Դևրիկյանը շարունակ արժարձել է հայ ազգային-ազատագրական շարժման տարբեր ժամանակահատվածների իրողությունները, խորին համակրանքով խոսել նրանց առաջնորդների մասին՝ սկսած Վարդան Մամիկոնյանից մինչև Հովսեփ Էմին, Դավիթ Բեկ ու Մխիթար սպարապետ:

¹⁶ Գ.Դևրիկյան, Հայոց մեծերը, էջ 162:

¹⁷ Նույն տեղում, էջ 376:

Նա իրավացիորեն Մկրտիչ Պեշիկթաշյանին անվանել է «Ազգային միասնության երգիչ»: Այդ ակնարկում նա պատկերում է, թե ինչպես Մկրտիչ Պեշիկթաշյանը սերտ կապերի մեջ է եղել 1862 թվականին բռնկված Զեյթունի ապստամբների հետ, և դրա արդյունքն էին «Հայ քաջորդի», «Մահ քաջորդվույն», «Թաղումն քաջորդվույն», «Հայ քաջուհին» բանաստեղծությունները, որոնք հայ մարտական քնարերգության անմոռաց նմուշներ են: Պեշիկթաշյանը պատգամում է հայ ժողովրդի արևելահայ ու արևմտահայ հատվածներին ազատագրական պայքարում լինել միասնական և այդ կերպ հասնել վերջնական հաղթանակի.

Երբ այլևոր Մայր Հայաստան
Տեսնե գորդիս յուր քովե քով,
Սըրտին խորունկ վերքըն դաժան
Քաղցր արտասվաց բուժին ցողով.
Ընդ աստեղոք ի՛նչ կա սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:¹⁸

Գրիգոր Մազիստրոսին նվիրված ակնարկում էլ Դերիկյանը բազմազիտակ հայ գործչի բանաստեղծությունների մեջ առանձնացնում է իր որդուն ուղղված մարտական

¹⁸ Նույն տեղում, էջ 445:

բանաստեղծությունը, որում հայրը հիշեցնում է, թե նա Հայկի շառավիղն է և պետք է հաղթի հայրենիքի թշնամիներին, ինչպես Հայկը՝ Բելին:

Գրքում միջնադարի հայ նկարիչների մեջ առանձնացված է Թորոս Ռոսլինը՝ որպես «Ամենապայծառ աստղ»: Ռոսլինի նկարներում նա տեսնում է տարածականության կիրառումը և գունային բուրբուրվին նոր լուծումները. «Այո՛, նրա ստեղծագործությունը սերտորեն կապված է Հռոմկլայի դպրոցի հետ, գրչության մի կենտրոնի, որը հայտնի էր ազգային ավանդների պահպանմամբ, և որի մանրանկարիչներն իրենց ստեղծագործության մեջ լայնորեն կիրառում էին հայրենի ծաղկողական արվեստի դարավոր ակունքներն ու փորձը»:¹⁹

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում բացված տպարանի գործունեությանն է նվիրված «Անձնվիրություն» ակնարկը: Նոր Ջուղայի թեմի առաջնորդ Խաչատուր Կեսարացու և նրա համախոհների ջանքերով 1638 թվականին լույս է տեսնում Դավթի սաղմոսների գիրքը. «Վերջապես սկսել էր գործել հայ մշակույթի մի շատ կարևոր օջախ: Իսկ սա առաջին տպարանն էր ընդհանրապես ոչ միայն Պարսկաստանում, այլև ամբողջ Միջին Արևելքում»:²⁰

¹⁹ Նույն տեղում, էջ 237:

²⁰ Նույն տեղում, էջ 339:

Գրքում ակնարկներ են նվիրված նոր գրականության ավետաբերներ Հարություն Ալամդարյանին և Մեսրոպ Թաղիադյանին: Նոր գրականությունը ներկայացնում են Խաչատուր Աբովյանը, Ծերենցը, Գաբրիել Սունդուկյանը, Միքայել Նալբանդյանը, Ռաֆայել Պատկանյանը և Բաֆֆին:

Բոլոր ակնարկների մեջ առավել տպավորիչը Խաչատուր Աբովյանին նվիրվածն է. նրանում պատկերված է, թե իր գրականությամբ Աբովյանը որդիական մեծ նվիրումով իր պաշտելի Հայաստանի նկատմամբ անանց սեր է առաջացնում հարազատ ժողովրդի զավակների սրտերում:

«Հայոց մեծերը» գրքում տեսնում ենք միջնադարյան Հայաստանի համալսարանները, որոնց դասախոսները՝ Հոհան Ռրոտնեցին և Գրիգոր Տաթևացին, յուրացրել էին անտիկ աշխարհի փիլիսոփաների երկերը, քաջաձանոթ էին Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, հայ աստվածաբան փիլիսոփաների՝ հունարենից կատարած թարգմանություններին և այդ գիտական հիմքով շարադրում էին նոր աշխատություններ՝ հարստացնելով հայ փիլիսոփայական միտքը: Գրքում չեն մոռացվել հայ բժշկապետեր Մխիթար Հերացին և Ամիրդովլաթ Ամասիացին: Չի մոռացված նաև XI–XII դարերի մեծ ուսուցչապետ, բնագետ, բանաստեղծ, մատենագիր, հայոց տոմարի կարգավորող Հովհաննես Սարկավազը, որն առա-

ջինը հայ իրականության մեջ իր աղոթքում դիմում է Աստ-
ծուն, որ աշխարհով սփռված հայերին վերադարձնի մայր
հայրենիք՝ Մեծ Հայք:

Հայ միջնադարի մեծերի նման Գևորգ Դերիկյանն էլ իր
Ժամանակակիցներին և գալիք հայ սերունդներին դեռ դպրո-
ցական հասակից կապում է հայրենիքի հետ՝ հայրենասիրու-
թյունը համարելով մարդու գերագույն զգացմունքը:



ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ «ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ» ՎԵՊԸ

Ձեռք մաշի, դառնա ի Հող, Գիրս մնա հիշատակող...

Հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը գրող, հրապարակախոս Գևորգ Դևրիկյանի համար եղել են կենսական այն դաշտը, որից նա ստացել է ստեղծագործական հզոր լիցքեր: Իր կոթողային երկի՝ «Տրդատ ճարտարապետ» վեպի նյութը միջնադարյան հանճարեղ ճարտարապետ Տրդատի կյանքի պատմությունն է, որը Անիի կերտման պատմությունն է. նաև հայ ժողովրդի ստեղծագործ ուժի գեղարվեստական արտացոլումը:

Պատմությունը Գ. Դերիկյանի կողմից չի ընկալվում որպես գեղարվեստական երկ հյուսելու ատաղձ: Պատմավեպը հնարավորություն է տալիս հայ ժողովրդի պատմությունը մատուցելու, կարևոր դասերը յուրացնելու և գրողի իդեալը փոխանցելու միջոց: Գ. Դերիկյանը գրական երկը դարձնում է պատմության գեղարվեստական արտահայտություն: Իր այս հատկանիշով «Տրդատ ճարտարապետը» ոչ թե պարզապես պատմավեպ է, այլ պատմագրական երկի ժամանակակից դրսևորում, գեղարվեստա-վավերական ծավալուն քերթված՝ պատմավեպի ժանրային լայն հնարավորություններով:

Հեղինակը Տրդատի կողմից Արգինայի եկեղեցու, Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի գմբեթի նորոգման և Մայր տաճարի շինարարության մասին տեղեկությունները քաղել է Ստեփանոս Ասողիկի «Տիեզերական պատմության»¹ Գ մասի Թ («Յաղագս կաթողիկոսութեան Տեառն Խաչկայ եւ շինելոյ գեկեղեցին եւ գտուն կաթողիկոսարանին ի գիւղն Արգինայ»), ԺԱ («Վասն թագաւորելոյն Սմբատա, որդւոյ Աշոտոյ եւ շինելոյ զպարիսպն Անւոյ հանդերձ եկեղեցական եւ գալոյ Կիւրապաղատին Դաւթի ի Շիրակ») և ԻԷ («Յաղագս

¹ **Ստեփանոսի Տարօնեցոյ** Պատմութիւն տիեզերական, երկրորդ տպագրութիւն, Ս. Պետերբուրգ, 1885:

երեւման աստեղն եւ շարժման Կոստանդնուպոլսի եւ մահ ապստամբին Չորտուանէլի») գլուխներից:

Տրդատի հանճարի գաղտնիքը հուզել է հայ և օտար ուսումնասիրողների², որոնց քաջաձանոթ էր Գ. Դերիկյանը: Ուսումնասիրությունների մեջ կարևորում էր հատկապես Թ. Թորամանյանի Անիի ավերակների քննությունը: Հետաքրքիր է, որ Թ. Թորամանյանը ժամանակին նպատակ է ունեցել Տրդատ ճարտարապետի մասին գեղարվեստական երկ հորինել, որի սևագրությունից միայն երկու թերթ է պահպանվել հեղինակի դիվանում, և Կ. Ղաֆադարյանն այն տպագրել է նույնությամբ «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» աշխատությունների երկրորդ ժողովածուի մեջ՝ «Տրդատ ճարտարապետի մասին» խորագրով³: Գ. Դերիկյանը բարձր է գնահատել նաև Լեոյի՝ Անիին նվիրված գիրքը՝ ասելով, որ այստեղ վեր է հանված

² **Оганесян К., Л.**, Зодчий Трдат, Ереван, 1951: **Բարխուդարյան Ա.**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 36, 37, 43-44. Ալդարիբ Պահլավունու եկեղեցու նորահայտ «ՏԴԱՏ» արձանագրության մասին է խոսում, որի տվյալները նույնպես օգտագործել է Գ. Դերիկյանը: **Լևոյան Գ.**, *Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը.* - «Էջմիածին», 1949, Զ (1-2), էջ 55-66:

³ **Թորամանյան Թ.**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Աշխատությունների երկրորդ ժողովածու, Կազմեց և խմբագրեց Կ. Ղաֆադարյան, Աշխատակցությամբ Ն. Թորամանյանի, Երևան, 1948, էջ 43, տողատակի ծանոթագրություն:

Անիի ողջ խորհուրդը⁴: Հեղինակը, ինչպես Լեոն իր հուշագրության մեջ, ընթացել է գեղարվեստականի և գիտականի համադրման ճանապարհով՝ լայնորեն կիրառելով պատմությունը հյուսելու միջնադարի հայ պատմագրության հարուստ փորձը: Հայկական մշակույթի տարբեր դրսևորումների վերաբերյալ տեղեկություններով հարուստ այս պատմավեպի համար միջնադարյան հայկական մանրանկարչությունը, գրչարվեստը, մատենագրությունը, կենցաղը, Հայաստանի բուսական և կենդանական աշխարհը, ժողովրդական բանահյուսությունը կարևոր աղբյուր էին: Վարդան Դերիկյանի վկայությամբ հայրը ժամանակին «հատուկ ուսումնասիրել է թե՛ շինարարական պատկերներ ներկայացնող մանրամասներ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից երջանկահիշատակ տնօրեն Սեն Արևշատյանի մոտ, ում հետ մոտ բարեկամներ էին», թե՛ Աստղիկ Գևորգյանի «Արհեստները և կենցաղը հայկական մանրանկարչության մեջ» աշխատությունը: Պատմավեպում մանրամասնորեն ներկայացված կենցաղային մանրամասների (հատկապես կերուխումի տե-

⁴ Այս և Գ. Դերիկյանի մասին մի քանի այլ տեղեկություններ շնորհակալությամբ ստացել ենք հեղինակի որդուց՝ բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Դերիկյանից: Տե՛ս Լեոն, Անի, Տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը, Երևան, 1963:

սարանները, հագուկապի նկարագրությունները) հիմնական աղբյուրը եղել է Վարդան Հացունու «Ճաշեր և խնճոյք հին Հայաստանի մէջ» (Վենետիկ, 1912) աշխատությունը: Հմուտ պատմաբանի ուշադրությունից չի վրիպել միջնադարյան Հայաստանի պատմության, գրականության, հատկապես բանահյուսության և ոչ մի մանրամասն. այս առումով Գ. Դերիկյանի «Տրդատ ճարտարապետ» կոթողային վեպը հանրագիտարանային աշխատանք է և ունի ճանաչողական մեծ արժէք:

Վեպի մտահղացումը ծնվել է հեղինակի ստեղծագործական որոնումների արդյունքում: Միջնադարյան Հայաստանի պատմամշակութային տարբեր իրողություններ արդեն ներկայացված էին հեղինակի «Կանաչ թուփ՝ կարմիր խնձորով», «Մատյանը փրկության», «Մումիկ վարպետ հիշեցեք», «Քարը մնաց հիշատակող» ստեղծագործություններում: Որոշ պատմվածքներում («Մի ծովական գիշեր») հանդիպում ենք հերոսների, որոնք գործում են նաև պատմավեպում:

Գ. Դերիկյանն ընտրում է հայ ժողովրդի պատմության մեջ շրջադարձային դեր խաղացած անհատների և ներկայացնում է ճակատագրական այնպիսի դրվագներ, որոնք հանգեցնում են խոր ընդհանրացումների ազգի ապագայի և անցնելիք ճանապարհի վերաբերյալ:

Հեղինակի ողջ ստեղծագործությունն արտահայտում է մեկ միասնական գաղափար՝ Անիի խորհուրդը, որը բացահայտում է Տրդատ ճարտարապետը. «Անին միտք է, ոգի, վերածնության խորհուրդ, խորհրդանիշ ինքնության: Ինքնություն է Անին, Անին ապացույց է, թե ինչի է ընդունակ միտքը ժողովրդյան: Եվ Անին շատ ու շատ հետո էլ ոգի ու կորով է տալու ժողովրդին: Անին հայոց ոգին է իր վսեմ պարգույթամբ ու չարի դեմ՝ ազնվությամբ: Անին գեղեցկություն է, ճաշակ՝ դիտողներին դեպի վեհն ու գեղեցիկն է մղելու, կրթելու միտքը, Անին հպարտություն է ոգու: Եվ ամեն ինչ է լինելու ակնահաճո ու ակնապարար»⁵: Սա հայ ժողովրդի արարչագործ ոգու թռիչքն է և ժամանակին դիմագրավելու միջոցը: Ահա՛ դարերից մեզ տրված հրամայականն ըստ Գ. Դերիկյանի:

Գիտական հսկայական պաշարով սնված Գ. Դերիկյանն իր երկի համար ընտրել է հայ ժողովրդի պատմության փառահեղ մի շրջան՝ Ժ. դարի վերջը - ԺԱ. դարասկիզբը, երբ փայլեց Անին՝ որպես Բագրատունիների մայրաքաղաք: Քաղաքը մի առանձին շքեղություն ու հմայք ստացավ ճանաչված ճարտարապետ Տրդատի շքեղաշուք կերտվածքներով:

⁵ **Դերիկյան Գ.**, Տրդատ ճարտարապետ, Երևան, 1983, էջ 494 (այսուհետև բնագրային քաղվածքների էջերը կնշենք շարադրանքին կից՝ փակագծերում):

Տրդաստի կերտած կամ նրան վերագրվող և ոչ մի կառույց չեն վրիպել հեղինակի ուշադրությունից. Արգինայի տաճարը սկիզբն էր Տրդաստի հասուն և ինքնուրույն քայլերի (973-977թթ.), Հաղպատի Սուրբ Նշան եկեղեցին (976-991թթ.), արքայական ապարանքը, պարիսպներն ու հյուրատները, կամուրջներն ու մատուռներն ապացույց են այն բանի, որ ինքը կյանքի ճիշտ ուղի էր ընտրել: Սուրբ Սոֆիան գորացրել էր մտքի թռիչքը (990թ), Մայր տաճարն իր երազանքների պսակն էր (977-1001թթ.)՝ իր ամենաթանկ ընծան հայրենի հողին⁶: Սրան հաջորդեց բոլորակ հիմքով Ջվարթնոցի նամայայամբ կերտված Գազկաշեն Սուրբ Գրիգորի տաճարը (1001-1010թթ.) և Վահրամ Պահլավունու պատվերով Մարմարաշենի վանքն ու Վահրամաբերդը, իսկ առնական բազկի ամենանուրբ դրսևորումը եղավ Հովվի վանքը՝ մոր հիշատակին⁷:

⁶ «Ինքը կառույցների մեջ Հայոց աշխարհի անկախ հզորությունն է շեշտում, կամքը ազատության, երազանքը գեղեցիկի: Եվ այս չորս հզորությունները միավորման տենչն են մարմնավորում բոլոր խլված հողերի ու հայոց իշխանությունների: *Միասնության տենչն են երկրի և ժողովրդի:* Այդպես հզոր ու միավորված է լինելու աշխարհն Հայոց» (էջ 501):

⁷ Թ. Թորամանյանը մեծ հիացմունքով է խոսում Հովվի վանքի մասին. «Հանճարեղ երևակայության մեծ թռիչք է պարսպեն դուրս Հովվի եկեղեցին... ճարտարապետության չնաշխարհիկ մարգարիտը». տե՛ս Թ. Թորամանյանի նշվ. աշխ., Ժողովածու Ա, էջ 338:

Հեղինակն ընտրել է նյութը մատուցելու յուրօրինակ եղանակ. Տրդատի կյանքի դրվագները միահյուսվում են Հայաստանի պատմությունը, իսկ տարբեր տարիներն ու իրադարձություններ իրար կապվում են պատումի սկիզբը և պատմական հիշարժան դեպքն արձանագրող թվականի հիշատակությամբ⁸, ինչպես ավանդական պատմագրության մեջ: Անիի Բարսեղ վարդապետի հորդորով ապագա ճարտարապետն սկսում է շրջել Հայաստանի պատմական վայրերով՝ հայտնի հուշարձաններն ուսումնասիրելով. լինում է Էջմիածնում, ուխտի է գնում Օշական Մեսրոպ Մաշտոցի շիրիմին (այստեղ էլ աստիճանաբար գիտակցում է Մաշտոցի խիզախումն ու դերը⁹), նաև Աշտարակում, հիանում է Մասիսներով, լինում է Վասպուրական աշխարհում՝ Վանում, Արծկեում, Խլաթում, Ոստանում, անմոռանալի տպավորություններ է ստանում Աղթամարից: Ավելի ուշ, արդեն

⁸ «Տիրոջ 989 թվականի ամառնամուտին ավարտին հասավ պարսպաց շինությունը», «Տիրոջ 993 թվականի գարնանից հետո...», «Եկան օրեր կառուցման...» և այլն:

⁹ «Այդ գրեթե իրար են կապում դարերն ու սերունդներին, և ընթերցելով մատյանները, թվում է քեզ, թե դու... մասնակիցն ես հանուն հայրենի երկրի ազատության մղած բոլոր մարտերի: Եվ արդեն գիտակցում ես, թե հայրենի երկրի պատմությունն անցած-գնացած մի բան չէ, այլ պատմություն է կենդանի, որի մասնակիցներին գիտես, ճանաչել ես... Եվ ըմբռնելու են, թե **գրիչ-ծաղկողներն էլ ազգի նույն զինվորներն են, որ ի մարտ են ընթացել մեսրոպյան զենքով**» (էջ 92):

հասուն այր՝ լինում է Կոստանդնուպոլսում, որտեղ հայ մարդու ստեղծագործական ոգու հաղթանակն է արձանագրում՝ Սուրբ Սոֆիայի տաճարի՝ երկրաշարժից տուժած գմբեթը նորոգելով: Տրդատի մտորումներում ու զգացումներում հառնում է պատմական Հայաստանն իր բնաշխարհով, առևտրական ճանապարհներով, բնական պաշարներով, կյանքի բնականոն ընթացքով, վարդապետարաններով, շինականների ծանր դրությամբ ու շքեղ շինարարական կառույցներով: Կուտակում է փորձ, հարստացնում է աչքը, հիանում է մարդկային ոգու սխրանքով՝ հարթելով իր հետագա ուղին: Այս փաստի գիտական հիմնավորումը տալիս է Կ. Հովհաննիսյանը Տրդատ ճարտարապետին նվիրված իր աշխատության մեջ¹⁰:

Այս ամենը զինում են ճարտարապետին, ամրացնում նրա բազուկն ու կրթում հոգին՝ Անիում շքեղաշուք ու հոյակերտ կառույցներ անելու: Անին դառնում է ն՝ ճարտարապետի, ն՝ հայ մարդու ոգու թռիչքի խորհրդանիշ: Պատահական չէ, որ նույն միտքը տարբեր կերպով հնչեցնում է հեղինակը.

¹⁰ **Оганесян К., Л.**, Зодчий Трдат, Ереван, 1951, ст. 18. “В городах Армении он получил первоначальное архитектурное образование, черпая знания у лучших зодчих страны, поскольку в первом же его произведении чувствуется не только глубокое знание древнеармянской архитектуры, но и высокая культура мастера-творца”.

«Անին ոչ միայն իրողություն է, այլև խորհուրդ, ոգի վերածնության» (էջ 136):

Տրդատը հեղինակի կատարելատիպն է, վեպի շարժիչ ուժը: Շատ չեն նրա համակիր հերոսները՝ Սիմոն և Բարսեղ ուսուցիչները, Ներսես և Անդրեաս քարգործ աշակերտները, կինը, մայրը, Վահրամ Պահլավունի իշխանը, Սուրեն բերդակալը, սակայն այս հերոսները նույնպես վեպի հյուսվածքում բացահայտում են ճարտարապետի (և հայ մշակույթի) էությունը: Ուսուցիչներից նա ստացել է լավի, գեղեցիկի, ստեղծագործ աշխատանքից ստացած բերկրանքի, աշխարհիկ բանաստեղծության գեղեցկության, հայ մատենագրության և գիտության, գրչական արվեստի առաջին դասերը: Նրանք վեպում խորհրդանշում են անցյալից մեզ ավանդված լույսը: Տրդատի առաջին ինքնուրույն ստեղծագործական լուծումը մագաղաթին առանց բնօրինակի ծաղկած մի լուսանցազարդ էր՝ «հայրենի տաճար էր իր ձևով և խոյակներով և գմբեթն էր վայելուչ՝ այնքան նյութեղեն և իրական» (էջ 55): Ստեփանոս Ասողիկի վկայությամբ Տրդատ ճարտարապետը հմուտ էր գրչական արվեստի մեջ. նա Սուրբ Սոփիայի տաճարի գմբեթի վերանորոգման ժամանակ նախագծելուց և եկեղեցու մանրակերտը պատրաստելուց հետո սկսում է

աշխատանքները¹¹, այս դրվագները վեպում պատկերված են մանրամասնորեն (էջ 259):

Տրդատի ճաշակի և աշխարհայացքի մասին պատկերացում է տալիս գրչական արվեստի հետ կապված մի հետաքրքիր դեպք. երիտասարդ Տրդատի ուշադրությունը Ուտանի շուկայում գրավում է «օրվա հացի կարոտ կռիվ տվող գրչի ձեռքով գրած» մի անշուք մատյան. «Մագաղաթի էջից՝ խնձորի ծառին մերձ կանգնած՝ իրեն էր նայում մի կապույտ շապիկ հագած աղջիկ: Կարմիր էին խնձորները և ծառն էր կանաչ... Անվարժ գրիչն այդ միակ պատկերն էր սրտով նկարել: Այդ պատկերը գծել էր սիրո ողջ ուժով և դրա համար էլ այդքան կենդանի էր: Աղջիկը ժպտում էր» (էջ 133): Կյանքի դժվար ու տխուր պահերին, երբ նենգ իշխանավորների նախանձի և իր աշակերտին՝ Անդրեասին աղանդավորության մեղադրանքից փրկելու նպատակով հեռանում է Անիից և գնում Կոստանդնուպոլիս, այս պատկերը շատ անգամներ է այցելում նրան՝ ուժն ու ստեղծագործելու կորովը վերականգնելով: Գ. Դերիկյանը խորհրդանշային այս դրվագով ընդ-

¹¹ «Բազում ջան եղել արհեստաւոր ճարտարացն Յունաց առ ի վերստին նորոգել: Այլ անդ դիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի՝ *տայ գորինակ շինուածոյն, իմաստուն հանճարով պատրաստեալ գկադապարս կագմածոյն եւ սկզբնաւորեալ գշինիչն*, որ եւ գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան գառաջինն». տե՛ս **Ստեփանոսի Տարօնեցոյ** Պատմութիւն տիեզերական, էջ 250-251:

գծում է, որ արվեստին կենդանություն տվողը բնավ եկեղեցին չէր, այլ ժողովրդի ստեղծագործ ոգին, որին պետք է հավատալ. «Անդրեաս սիրելի, հարկավոր է հավատ ունենալ: Առանց հավատի շատ դժվար է ապրելը: Հավատ մարդկային արարիչ ուժի հանդեպ» (316):

Անդրեաս քարգործի հետ ճարտարապետի գրույցները պտտվում են հայ մարդուն հուզող բոլոր հարցերի՝ թոնդրակյան աղանդի, ախտարական գրականության, մեկնողական արվեստի, գրչության կենտրոնների, տիեզերագիտության, պատկերամարտության, բույսերի տեսակների, հայ մատենագրության, թատրոնի, գուսանների, չեպիսկոպոսների անբարո վարքի մասին¹²: Եկեղեցու սպասավորների (նրանց «չեպիսկոպոս» բնորոշումն են տալիս վեպի հերոսները) կեղծ բարեպաշտ կեցվածքին վեպում հակադրվում են Սիմոն և Բարսեղ կրոնավորները: Թոնդրակյան գաղափարախոսության և աշխարհիկ երգերի առաջին անկեղծ մեկնաբանությունները Տրդատը լսում է լուսամիտ և ուշիմ ուսուցիչներից. «Երգով է արարվում ամեն ինչ. երգ է ունենալու և՛ գրիչ-ծաղկողը, և՛ դարբինը, և՛ քարգործը: Երգի նման գեղեցիկ է լինելու

¹² «Հարկ չկար կուսակրոն դառնալ, երբ ունկնդիր են բնության ձայնին: Եվ ամենամեղադրելին այն է, երբ մի բան են քարոզում, և այլ բան անում: Եվ շատ մեղք են այն կույսերը, որ հարսնանալու իրավունք չունեն և աբեղաները, որ իրավունք չունեն փեսայանալու: Եվ եթե այդպես չլիներ, որքան մարդաշատ կլիներ Հայոց աշխարհը» (էջ 318):

և նրանց ստեղծածը: Երգի նման զարմանալի ու հրաշալի» (Էջ 35): Ինքն էլ առաջին անգամ Հատիճի վանքում պատժվել էր աշխարհիկ երգեր երգելու համար:

Տրդատը հեղինակի գաղափարակիր հերոսն է. նա ժամանակակից մարդուն հիշեցնում է անանց արժեքների՝ գիտության լույսի¹³, արարման հրճվանքի, հողի հիշողության մասին:

Մին ինքնասիրության և ազգային սնապարծության նշույլ անգամ չկա նաև հեղինակի այն տողերի մեջ, երբ Վասիլ կայսրին մերձավորներից մեկը կասկած ու վախ է հայտնում, թե ինչու է հայը նորոգելու տաճարի գմբեթը. «Ինչո՞ւ այդ չորս տարում չէին մտածում վերաշինության մասին: Իսկ այժմ, երբ եկել է Տրդատ հայը, վիրավորվում եք բոլորդ... Եվ Արմենիայում էլ բնավ չեն ծիծաղի մեզ վրա, այլ կհպարտանան, որ գիտենք հարգել իսելքն ու ճարտարությունը: Լոկ հիմարը կծիծաղի, իսկ իսելացի մարդը կուրախանա միայն, երբ տեսնի, թե դիմացինը հարգում է իսելքը... Եթե նույնիսկ Արմենիա երկրում ծիծաղեն մեր արարքի վրա, մեզ վնաս չէ, քանզի *ծիծաղը կանցնի, և վերաշինված*

¹³ «Գիտելիքները բացում են մարդու մտքերը և միտքն արթնացնում, իսկ արթնացած միտքը ծարավում է գիտելյաց: Իսկ քնած միտքը նման է որկրամուլ ու ծույլ մարդու, որ նինջ է մտել անտարբեր» (Էջ 239):

տաճարը կմնա... Տրդատ հայն ինքն է մեզ պատիվ անում այս դժվար գործը հանձն առնելով» (էջ 262):

Ժ-ԺԱ դարերով չի սահմանափակվում վեպի բովանդակությունը: Գաղափարային առումով այն շատ ավելի խորն է՝ Գ. Դևրիկյանի Երկիր Նաիրին է Անին, հայրենի հողի կանչն ու հավերժական երազը, ժամանակի դեմ Հայոց աշխարհի և հայ մարդու տարած փայլուն հաղթանակը. «Հետո տարին կգումարվի տարուն ու դարը՝ դարին և հպարտությունը կգորանա առավել Տրդատ Անեցու մեծ գործի հանդեպ և գործին ի հիշատակ՝ հավերժական Անին կմնա»:

Հայաստանի մշակութային ողջ հարստությունն ամբարող այս պատմավեպն ընթերցողին ներկայանում է լեզվի և ոճի բազմազան նրբերանգներով, լեզուն փայլում է իր ողջ ճոխությամբ: Հեղինակը գործածել է լեզվական շերտերի ամենատարբեր դրսևորումներ, ըստ պահանջի հերոսների խոսքը համեմել ռամկական և վերամբարձ ոճերով: Վեպի լեզուն գրաբարյան շարահյուսությամբ համեմված աշխարհաբարն է. հեղինակը գործածում է գրաբարյան խոսքին բնորոշ ոճեր՝ ետադաս որոշիչ, բառակրկնություններ և այլ հնարանքներ, որոնք վսեմություն են հաղորդում պատումին. «Եվ սրտում *լաց լացեց* Տրդատ ճարտարապետը, *որ* մորն է հանձնում հողին *և լաց լացեց հոգում*, *որ* որք է մնում, չնայած հատուն այր է և երեք զավակաց հայր: Ու շիրիմի մոտ *ուխտ*

նիստեց մտքում, թե մորն ի հիշատակ մի մատուռ կկառուցի» (էջ 451): Վեպը պատմաբաների շտեմարան է: Ուսուցիչների և հոգևորականների խոսքը համեմված է Սուրբ Գրքից արված գրաբարյան մեջբերումներով, նրանք հաճախ են խոսում շարականների, Հայսամավուրքների, քարոզների մասին, անում են մեջբերումներ: Ժողովրդական քնարերգությունը ստեղծագործական լայն հորիզոն է բացել Գ. Դերիկյանի համար: Լարախաղացների, թատերգակների խոսքը՝ հայրենիների միջոցով դրսևորված ժողովրդական բառ ու բանն է: Աշոտի մահվան առիթով սգո արարողության նկարագրությունը հյուսել է լավկան երգին բնորոշ ոճական արտահայտչաձևերով (էջ 170): Տարեց հոգևորականների գայրույթը շարժող երիտասարդ աբեղաներին և սիրահար պատանիների տեսնում ենք հայրեններ ու խաղիկներ ասելիս (Եղբայրիկ պատանու և Խնձորիկի սիրային պատմությունը, էջ 102-105): Աշակերտների հետ իր գրույցներում Տրդատը խոսքը հաճախ համեմում է ավանդագրույցներով (Անմահություն փնտրող մարդու ավանդությունը, էջ 237, Մոր օրհնանքի մասին, էջ 323, Բարու մասին, էջ 327):

Վեպում զանգվածային տեսարանները մեծ տեղ չեն գրավում, սակայն առանձնահատուկ են պատկերման մոնումենտալ դրվագները՝ ճարտարապետական կոթողների նկարագրությունները: Տպավորիչ են հատկապես Աղթամարի

վանքի, Կոստանդնուպոլսի, Անիի Մայր տաճարի, արքայանիստ ապարանքների նկարագրությունները (էջ 368, 440-443, 497-500): Այստեղ Գ. Դերիկյանի նկարագրական խոսքն աչքի է ընկնում գուսպ պատկերավորությամբ:

Վեպին մի առանձին հմայք ու գունեղություն են հաղորդում թե՛ ժողովրդական և թե՛ սուրբգրային առած-ասացվածքներն ու անեծք-օրհնանքները: Հետաքրքիր է, որ հեղինակը «բացասական» հերոսներին անուն չի տալիս. նրանք վեպի հյուսվածքով անցնում են բեմական դեկորների պես՝ սրանով ընդգծելով, որ չարությունն անհետ պիտի կորչի, իսկ բարին հաղթանակի. «Մարդիկ իրենք պիտի չարն արմատախիլ անեն և տեր ու պաշտպան կանգնեն բարուն» (էջ 346):

Տրդատի կողքին որպես վեպի «գործող» հերոս հանդես է գալիս նաև ձեռագիր գիրքը: Ամենայն մանրամասնությամբ և հոգատարությամբ է հեղինակը ներկայացնում ձեռագրի ստեղծման ողջ ընթացքը՝ հիշատակելով կույր ու նվիրյալ գրիչների, որոնք իրենց կյանքը չեն պատկերացնում առանց արարելու (Գրիգոր կույր գրիչը, էջ 304), արդեն զառամյալ ուսուցիչների, ինչպես Բարսեղ կրոնավորը, որոնք շարունակում են ուսուցանել: Իր շնորհները Տրդատը փոխանցել էր զավակներին. ավագ որդին՝ Խաչատուրը, շինարար էր, իսկ Մարգիս որդին՝ ծաղկող:

Մատյանն ու շինարարական կառույցը վեպում ներկայանում են անբաժանելի միասնության մեջ. «Սա մի քարեղեն մատյան էր,- խորհում է Տրդատը Աղթամարի վանքի մասին,- որի ամեն մի պատկեր էջը շատ բան էր հայտնում և ուսանում դիտողին» (էջ 119): Այդ կապը Տրդատը զգացել է անընդհատ. երբ ավարտում էր ընդօրինակելը, սկսում էր կառուցել և հակառակը: Այդ միասնության մեջ էլ ծնվում է ազգի հանճարը. «Գաղտնիքը նախնյաց կառուցողական արվեստի. վեհացնել և վսեմացնել, ձուլել հրաշքին, մարդու մտքի ու էության մեջ ամենագործության զգացումը ներարկել: Եվ որքան հանճարեղ են եղել կառուցող այրերը Հայոց աշխարհի. այդպես են կերտել. դյուրին է եղել այդ կամարների ներքո մատյան արարելը և միտք արարելը» (էջ 353):

Թերևս հենց այս զգացողությամբ էլ գալիք սերունդներին իր կերտածը ավանդելու պատրաստակամությամբ Տրդատը ստեղծեց իր կոթողները, որոնց արձագանքներն այսօր էլ հասնում են մեզ նաև Գևորգ Դերիկյանի ստեղծագործության միջոցով: Տրդատի հանճարի նուրբ շերտերը զգալով՝ Լեոն տվել է Վարպետի արվեստի դիպուկ բնորոշումը. «Ամեն կողմից, յուրաքանչյուր խոռոչից, յուրաքանչյուր գծից, ավելի ճիշտ՝ յուրաքանչյուր կտոր քարից նայում է այս զարմանալի տաճարի (Մայր տաճար) շինողը: Տրդատը անմահ է, քանի որ այստեղ քար քարի վրա

կմնա: Նա արտահայտել է իր գաղափարը մի հիացող համաշափությամբ... Ճարտարապետը հրաշալի կերպով կարողացել է նվաճել գեղեցկության երկու սկզբունք. բարձրություն և նրբություն... Օդ կա այս շինության մեջ, նվաճվածը իսկ այդ օդն է»¹⁴:

Հայ ժողովրդի ստեղծագործ ոգու ներքոդ «Տրդատ ճարտարապետ» վեպն այսօր առավել քան սպասված է: Գևորգ Դերիկյանի Տրդատը կարող էր ապրել Հայաստանի ցանկացած այլ վայրում և այլ ժամանակներում, բայց նրա հավատամքը նույնը կլիներ, քանի որ նա արմատներով հողին կապված արվեստագետ էր և գիտակցում էր այդ կապը, գիտակցում էր նաև այլ ժողովուրդների ստեղծագործ ոգին՝ չցածրացնելով սեփականը: Իր արվեստով նա իմաստավորում է անցյալը և պայծառ հայացքով նայում ազգի ապագային. «Գերված հողը վրեժ է պահանջում: Իսկ նա, ով իր կամքով ու վատաբար թողնում է հողն ու հեռանում, իրավունք չի ունենում հողի վրա և որդուն չի պատմում հողի մասին ու որդու սրտում վրեժ չի կուտակվում լքված հողի համար: Եվ հոգում չի ունենում հայրենի կարոտ: Այդպես կամովին հողից հեռացածները սերունդ առ սերունդ խոր-

¹⁴ Լեո, Անի, Տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը, էջ 154-156:

Թանում են հողին ու ոչ ոք չի մնում հողին կարոտող» (Էջ 228):
Հիրավի՛ այժմեական ուղերձ:



ՊԱՐՈՒՅՐ ՍԱՀԱԿՅԱՆ

*Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ «ՎԻՐԱՎՈՐ ԿՌՈՒՆԿ» ՎԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

*Քու գալն է հազար բարի,
Քու գնալն է խեղճ ու լալի:*

Ակնա երգից

Գևորգ Դևրիկյանը «Վիրավոր կռունկ» վեպը նվիրել է իր հորը հետևյալ հղումով. «Հորս՝ ակնեցի Խաչատուրի հիշատակին: Հեղինակ»:¹ Երբ կարդում ես վեպը, հասկանում ես այս նվիրումի ողջ իմաստը:

¹ Գ. Դևրիկյան, Վիրավոր կռունկ, Երևան, 1977, էջ 3:

«Վիրավոր կռունկը» գրվել է Խորհրդային Միության ծաղկուն տարիներին, երբ ջերմ հարաբերություններ կային այդ, հիրավի, գերտերության և Թուրքիայի միջև, սակայն սա չի խանգարել հեղինակին իր վեպով յուրօրինակ ձևով բողոքի ձայն բարձրացնել կորցրած Արևմտյան Հայաստանի համար, որի չքնաղ անկյուններից էր Ակն քաղաքը: Տեսնենք, թե ինչ է գրում Հ. Ս. Էփրիկյանն Ակնի մասին: «Գեղադիր և ավելի իր անցյալով, քան ներկա վիճակով հռչակավոր քաղաք Փոքր Հայքում, որ նեղ ձորակի մեջ է, Եփրատի աջ կողմից ամֆիթատրոնի ձևով աստիճանաբար բարձրանում է բարձրակատար լեռան կողմը»:²

Էփրիկյանն իր բառարանում մեծ հոդված է նվիրել Ակն քաղաքին, զետեղել է այդ բնակավայրի շատ գեղեցիկ նկարը՝ նշելով, թե մարդկային ձեռքի աջակցությամբ Ակն քաղաքը դարձել է այնքան գեղազվարճ, որ նման գեղեցկությունն դժվար է գտնել մեր բնաշխարհի ուրիշ կողմերում: Ակնի դիրքն ապահովել է առողջարար օդ՝ ամռանը զով ու ախորժելի եղանակ, իսկ ձմռանը նվազ ցուրտ, այն շրջապատող բարձր լեռների շնորհիվ ազատ է նաև տոթագին խորշակից: Ակնը առատաջուր էր, սակայն հողագուրկ: Հայ մար-

² Հ. Ս. Էփրիկյան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. I, Վենետիկ, 1902, էջ 76: Մեջբերումը դարձրել ենք արևելահայերեն և արդի ուղղագրությամբ – Պ.Ս.:

դը կարողացել է հեռու վայրերից հող բերել ու քաղաքում ստեղծել այգիներ ու պարտեզներ՝ դարձնելով «Ակնը գեղափայլ և գեղազվարթ օազիս դիտողի աչքի համար»:³

Ակնում հայերն աճացրել են թուփ, սալոր, խաղող, խնձոր, տանձ, ընկույզ և այլ տեսակի մրգեր ու բանջարեղեն: Ակնի մոտ Եփրատը եղել է ձկնառատ: Ընդհանրապես Ակնի մոտ գտնվող գյուղաբնակներն անգամ քաղաքային կյանք են վարել: Էփրիկյանի հաղորդած այս և այլ տեղեկությունների ծանոթ է «Վիրավոր կռունկ» հիանալի պատմավեպի հեղինակը, որը խորքով ուսումնասիրել է Ակնի բանահյուսությունը, ինչպես նաև XVII-XVIII դարերի հայ ժողովրդի պատմությունը և՛ սկզբնաղբյուրներով, և՛ պատմաբանների գրքերով:

«Վիրավոր կռունկ» վեպի թեման հայ պանդուխտների կյանքն է, որն ընթացել է օտար երկրներում: Պանդխտի դառը ճակատագիրը ներկայացված է պատմաբանի ու քաղաքագետի քաջատեղյակ հայացքով:

«Վիրավոր կռունկ» վեպը բաղկացած է երեսուն դրվագներից, և բոլոր դրվագներն ունեն Ակնի բանահյուսությունից՝ անտունիներից ու այլ երգերից քաղված բնաբաններ:

Կռունկը սիրելի կերպար է հայ ժողովրդական բանահյուսության մեջ. այդ թռչունի միջոցով հայ պանդուխտն ար-

³ Նույն տեղում, էջ 78:

տահայտել է իր հայրենաբաղձությունը: Այս երևույթի մասին նշանավոր միջնադարագետ Ասատուր Մնացականյանը գրում է. «Դրանից բացի, աստիճանաբար երևան են գալիս հայրենասիրական ուրիշ ստեղծագործություններ, որոնց մեջ առանձնահատուկ տեղ են գրավում կռունկ թռչունին ուղղված պանդխտության սրտաճմլիկ ու քաղցրաշունչ երգերը: Այստեղ բնորոշն այն է, որ հայ պանդուխտը ոչ թե երկիր ներխուժած բռնակալների հանկարծ իջնող յաթաղանից կամ գերեվաճառքի տանող մասսայական տեղահանումներից է ընկել պանդխտության գիրկը, այլ մի ուրիշ ուժից: Երբ Հայաստանը բաժանվում է Թուրքիայի և Պարսկաստանի միջև, հայ ժողովուրդը իր սեփական հողի վրա, իր հայրենի տանիքի ներքո ապրում է ահավոր աղքատության ու շահագործման դժնդակ պայմանների մեջ»:⁴ Այս պատմական ճշմարտությունն է ընկած Գևորգ Դևրիկյանի «Վիրավոր կռունկ» վեպի հիմքում:

Խորապես ուսումնասիրելով հայ ժողովրդի XVII և XVIII դարերի պատմական անցուդարձը՝ վիպասանի միտքը կենտրոնացել է Ակն քաղաքի հայերի ճակատագրի վրա: Մանավանդ նրան հայտնի էր, որ Ակնը պանդխտության բնօրրաններից էր և հենց Ակնում էին ստեղծվել անտունի-

⁴ Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 48-49:

ներն ու գուցե նաև կռունկին նվիրված երգերը. «Ակնը բանա-
սերներն անվանում են Հայոց երկրորդ Գողթն: Այն հայտնի է
իբր ժողովրդական երգերով, անտունիներով, տաղերով:
Ակնեցիներն իրենց ժողովրդական երգերի լավագույն կա-
տարողներն են»:⁵

«Վիրավոր կռունկ» վեպի հերոսը Արթինն է, որը ծնվել
է Ակն քաղաքում, հետո որբացել է ու մեկնել պանդխտու-
թյան: Նա սովորել է պղնձագործի արհեստը և դարձել այդ
բնագավառի հմուտ վարպետ:

Սակայն նա ունի նաև տաղարան, որում գրառում է իր
հայրենիքի սիրելի երգերը՝ պանդխտի սրտաճմլիկ մրմունջ-
ները:

Արթինը դժբախտ է արդեն երիտասարդ օրերին, որով-
հետև իր ջահել ու սիրելի կինը վախճանվում է ծննդաբերու-
թյան ժամանակ՝ թողնելով նորածին որդուն: Ու թեթև, բարի
մարդկանց օգնությամբ Արթինը փորձում է պահել-պահպա-
նել նորածնի կյանքը, սակայն դա դառնում է անհնար. մեռ-
նում է նաև որդին:

Դեպքերը տեղի են ունենում Մոլդավիայում, որտեղից
Արթինն անցնում է Լեհաստան, հետո Ռուսաստան, այնու-

⁵ Թ. Խ. Հակոբյան, Մտ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաս-
տանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ա-Դ,
Երևան, 1986, էջ 137:

հետև Ստամբուլ և, հաղթահարելով բազում դժվարություններ, հասնում է իր ծննդավայրը՝ Ակն քաղաքը:

Սա յուրօրինակ մի Ողիսական էր, որին դատապարտված էր ոչ միայն Արթինը, այլև հազար-հազարավոր հայ պանդուխտներ:

Զնայած վեպի գործողությունները զարգանում են XVIII դարի երկրորդ կեսին, սակայն երկրի վիճակի վատթարացման հիմքը սկսում է հենց XVII դարից, երբ անկում է ապրում նաև Էջմիածնի կաթողիկոսարանի գործունեությունը, և լեհահայ գաղութը Նիկոլ Թորոսովիչ հայրենադավ եպիսկոպոսի բռնություններով ընդունում է կաթողիկոսությունը ու անջատվում հայ լուսավորչական եկեղեցուց: Այդ մասին պատմում է Առաքել Դավրիժեցին իր պատմության ԻԸ գլխում՝ «Պատմություն նեղությունների ու չարչարանքների, որ կրեցին Լվով քաղաքում բնակված հայ քրիստոնյաները» վերնագրով:⁶ Լեհահայերի կաթողիկ դառնալուն մեծապես նպաստեց Մելքիսեթ վատահամբավ կաթողիկոսը:⁷

⁶ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան, 1988, էջ 285-287:

⁷ Նույն տեղում, էջ 287:

Գևորգ Դերիկյանի «Վիրավոր կռունկ» պատմավեպը խիստ այժմեական է: Այն ներկայացնում է միջազգային մի շարք ձեռնարկներ, որոնց միջոցով պետականություն չունեցող ազգերին փորձում էին առավել թուլացնել՝ նրանց հեռացնելով ազգային կրոնից ու ազգային ինքնագիտակցությունից: Այդ արվում էր միսիոներների միջոցով հայերին սեփական եկեղեցուց հեռացնելով, որը վեպում պատկերված է որպես մարդորսություն կրոնի միջոցով: Մյուս կողմից էլ պատկերված է, թե անգամ Հայաստանի պարսկական մասում հայերը ենթարկվում էին թուրքերի հարձակումներին, կոտորածներին ու ունեզրկմանը:

Գ. Դերիկյանի վեպն ունի շատ կարևոր տողատակային բացատրություններ, օտար բառերի թարգմանություններ, որոնք նպաստում են ընթերցողին առավել խորքով հասկանալու գրողի ասելիքի կարևորությունը և ձեռք բերելու հայ կրոնին, հայ ժողովրդի պատմությանը վերաբերող կարևոր գիտելիքներ:

Գ. Դերիկյանը քաջատեղյակ է, որ տիեզերահռչակ Անիի կործանումից հետո նրա բնակիչների մի մասը հաստատվել է Ակնում և այն շենացրել: Մակայն Անիի վսեմության հուշն ապրել է ակնեցիների սերունդների սրտերում: Որպես հայրենասեր՝ վեպի հեղինակը Անին կամենում է նորից շեն տեսնել իր ողջ պերճության մեջ: Անիի ավերակնե-

րում բնակվող վարդապետն ասում է. «Նպատակը բոլորինս է, մեկ օր էլ արև տեսնենք Անիի վրա՝ շենանա ու կենդանանա: Բայց երևի դեռ շատ կա այդ օրվան: Հիմա ավերակ է մեր հույսի պես, քայց ավերակ էլ՝ կանգուն է պահում մեր ոգին: Եվ թող խուլ ու մունջ աշխարհը տեսնի, թե ինչ ենք կերտել, երբ հնար ենք ունեցել: Թող մեզանից հետո եկողներն էլ իմանան ու հիշող լինեն: Չգիտեմ՝ վաղն ավելի քանդվելո՞ւ է, թե շինվելու: Եթե շինվելու է՝ հազար փառք կերտողին, թե ավերվելու է՝ բյուր նգովք ավերողին»:⁸

Վիպասանը քաջ գիտի ոչ միայն հայ պատմիչներին, այլև հայ միջնադարի գրողներին ու Անիի մասին խոսելիս մեջբերում է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» չափածո պատմական քերթվածի՝ Անիին վերաբերող հետևյալ խոսուն տողերը.

Քանզի երբեմն և դու էիր
Վայելչական հարսն ի քողի,
Մերձաւորաց յոյժ ցանկալի,
Հեռաւորաց փափագելի:⁹

⁸ Գ. Դևրիկյան, Վիրավոր կռունկ, էջ 142:

⁹ Նույն տեղում, էջ 145:

Վեպում նկարագրված է, թե որքան ճնշված են հայերը Ստամբուլում, և թուրքական սուլթանը հայ պատրիարքի վրա ծանր հարկեր է դնում:

Ճնշումները, կողոպուտը չեն ընկճում հայ ազատամիտ հոգևորականների և խիզախ մարդկանց ոգին: Եվ նրանք ելքեր են փնտրում օտար լծից ազատագրվելու համար: Խիստ ուշագրավ և հուզիչ կերպար է քարավանապետ Հակոբը: Նա էլ Արթինի նման ոչ մի հարազատ չունի, սակայն չի չարացել աշխարհի ու իր հայրենակիցների նկատմամբ: Նա մեծ մարդասեր է և իր քարավանով օգնում է հայ վաճառականներին ու պանդուխտներին տեղից տեղ շարժվելու ու պանդուխտներից իր դժվարին ծառայության համար երբեք գումար չի վերցնում:

Վեպի անմոռաց դրվագներից է այն շքահանդեսը, որը թուրքական սուլթանը կազմակերպել էր իր որդու ծննդյան առիթով: Պանդուխտները դիտում էին շքահանդեսը, որի ժամանակ սուլթանի առջևով անցնում էին այն գողերն ու գրպանահատները, որոնք պանդուխտներին շարունակ պատուհասում էին: Ահա, թե ինչ է խորհում վեպի գլխավոր հերոս Արթինն այդ առթիվ. «Միամիտ մարդիկ,- մտածում էր Արթինը,- գողերը գողակիցներին են սիրում և ոչ թե ձեզ, փոքր գողերն անցնում են մեծ գողերի առջևով, տարբերու-

թունն ի՞նչ է: Որոնք չէին գողերը, պաշտոնյանե՞րը, դատավորնե՞րը: Ով չի կողոպտում աղքատ մարդկանց»:¹⁰

«Վիրավոր կռունկ» վեպում կան պատմական կերպարներ՝ Հովսեփ Էմինը, Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, Հերակլ Երկրորդ Վրաստանի արքան:

Ինչպես երևում է՝ վիպասանը լիովին ծանոթ է Հովսեփ Էմինի ազատագրական ծրագրերին և նրա արկածներով լի կյանքի պատմությանը:¹¹

Մեզ ծանոթ է Հովսեփ Էմինի կյանքի պատմության ինքնագիր անգլերեն օրինակը, որը լույս է տեսել Լոնդոնում 1792 թվականին:¹²

Խորապես համոզված ենք, որ Գևորգ Դերիկյանը ծանոթ է եղել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանի 1945-ին ռուսերենով լույս տեսած „Иосиф Эмин” գրքին, որը վերահրատարակվեց 1989 թվականին:

Պատմաբան Աբգար Հովհաննիսյանը հիմնականում զբաղվել է XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի առաջին տասնամյակների հայ ազգային-ազատագրական շարժումների պատմությամբ: Հովսեփ Էմինը XVIII դարի երկրորդ

¹⁰ Նույն տեղում, էջ 290:

¹¹ Տե՛ս Հովսեփ Էմինի կյանքը և արկածները, Բեյրութ, 1958:

¹² Տե՛ս The life and adventures of Josef Emin, an armenian. Written in English by himself, London, printed in the year 1792.

կեսի հայ ազգային-ազատագրական շարժման պարագլուխն էր: Նա զինվորական էր և կրթությունը ստացել էր Անգլիայում: Միաժամանակ հրաշալի պատկերացնում էր, թե որքան ծանր էր թուրք-պարսկական լուծը հայ ժողովրդի համար:

Աբգար Հովհաննիսյանը գրում է, թե Հովսեփ Էմինը իր պատանեկության տարիներին ծանոթացել է հայ ժողովրդի կյանքի մոայլ իրականությանը: Եվ իր սիրելի ժողովրդի շահագործման, բռնությունների ենթարկվելուն, տառապանքներին ու ողբերգական պատկերներին ականատես լինելու տեսարանները մշտապես եղել են նրա հիշողության մեջ: Պատմաբանն ավելացնում է. «Այդ հարկերի չափը՝ բնամթերքի և նույնպես դրամով, փաստորեն սահմանափակում չուներ: Ամեն փաշա և ամեն խան վերցնում էր իրեն ենթակա հայ ժողովրդից այն, ինչը հնարավոր էր: ...Հայերի իրավագրկումը Թուրքիայում, ինչպես և Իրանում, կատարյալ էր»:¹³

Գ. Դերիկյանը վեպի երկրորդ մասում պատկերում է հայ ազգային-ազատագրական շարժման նախապատրաստումը, որում առաջատար դերը պատկանում էր Հովսեփ Էմինին: Այդ շարժման իրականացնողը լինելու էր Էմինը՝ հենված վրացական զինուժի, ինչպես նաև հայ կամավորա-

¹³ А.Р. Иоанисян, Иосиф Эмин, Ереван, 1989, с. 11.

կան ջոկատների վրա, որոնց կազմակերպիչն էր Հովնան Մշեցի վանահայրը: Էմինը սերտ կապեր էր հաստատել նաև Ղարաբաղի հայ մելիքների հետ, որոնք նույնպես միանալու էին ազգային-ազատագրական շարժմանը:

«Վիրավոր կռունկ» վեպը գրվել է խորհրդային տարիներին, երբ այդ գերտերության վերացման մասին մտածելն անգամ անհնար էր, ինչպես նաև Ղարաբաղը որպես պատմական Հայաստան ճանաչելը: Սակայն Դևրիկյանը չի մոռանում հիշեցնել հայերին, որ Ղարաբաղը Հայաստան է: Նա վեպում շարունակ ներկայացնում է Մեծ Հայքի տարածքները, հիշեցնում, թե Տարոնը ինչ նշանավոր որդիներ է պարգևել հայ ժողովրդին. «Տարոն աշխարհ, հպարտ էիր զավակներովդ մեծահամբավ: Դու տվեցիր ազգիս հայկազյան Երանելի Մեսրոպ և Քերթոզահայր Խորենացի, Քաղցրախոս Եղիշե և Անհաղթ Դավիթ: Տվեցիր ազգիս պաշտպան Մամիկոնյան սպարապետներ հաղթաբազուկ: Վկան Ավարայրն ու Ձիրավը և հայրենապաշտպան բազում գործերը նրանց»:¹⁴

«Վիրավոր կռունկ» վեպն իր ողջ բովանդակությամբ հիմնավորում է, թե ինչու 1915-ին և հետագա տարիներին թուրքերն իրագործեցին հայերի ցեղասպանությունը:

Վեպն ապացուցում է, որ ցեղասպանությունը սկսվել էր ավելի վաղ դարերում: Թուրքերը պահանջում էին հայե-

¹⁴ Գ. Դևրիկյան, Վիրավոր կռունկ, էջ 588:

րից դառնալ մահմեդական, չխոսել հայերեն, այլ թուրքերեն: Եվ այդ պահանջը դնում էին գյուղի երեցների վրա, որովհետև հենց նրանք պետք է պահպանեին ազգային լեզուն և կրոնը:

Վեպի գլխավոր հերոսը՝ Արթինը, Ակն վերադառնալուց հետո տեսնում է, թե ինչպես հայերը վախենում են մայրենի լեզվով խոսել ու եկեղեցի գնալ, «Մոլեռանդ մոլլան ամեն օր ազանին նգովք է կարդում գյավուրներին ու նրանց լեզվին: Եվ վախենում են հայերեն խոսել ոչ թե ալլահից, այլ հենց մոլլայի զայրույթից»:¹⁵

Հայկական Կաշո գյուղում թուրքերը բոլորին դարձնում են մահմեդական՝ անգամ գյուղի երեցին: Միակ քրիստոնյան մնում է իրիցկինը, որը հուսահատությունից հարևան գյուղի ժայռից իրեն ցած է նետում՝ պատվիրելով, որ այդ գյուղը գոնե մնա քրիստոնյա և իր հոգու համար խունկ ծխի. «Եվ նրանց աչքի առջև իրեն բարձր ժայռից նետել էր ձորը: Կամրկապցիները գտել էին ջախջախված դին ու պատվով թաղել և միշտ հիշում էին աղոթքներում: Եվ ամեն կիրակմուտի, երբ մամիկները խունկ են ծխում կտրանը, աղոթք են մրմնջում, «Աստված օղորմի հին ու նոր անցավորաց, անօրեն սպանվածին, ծովն ու ցամաքը մեռածին, ճամփա

¹⁵ Նույն տեղում, էջ 381:

շինողին, աղբյուր բերողին, կամուրջ կապողին, Աստված օղորմի Կաշոյի իրիցկինին»¹⁶

Աբգար Հովհաննիսյանը Հովսեփ Էմինին նվիրված գրքում գրում է. «Он твердо надеялся, что его книгу будут читать молодые армяне»¹⁷

Ի դեպ, երբ կարդում էինք Հովսեփ Էմինի ինքնագիր անգլերեն բնագիրը, համոզվեցինք, որ այն հայրենասեր մարդու արկածային կյանքի պատմություն է, որից պարզ է դառնում, որ Էմինը երբեմն մազապուրծ է եղել մահվանից, նաև հաճախ նրան արտաքսել են այցելած երկրներից: Նման դեպք պատահել է հենց Վրաստանում, որտեղ Հերակլ Երկրորդը, սկզբում ոգևորվում է Արևմտահայաստանը ազատագրելու ծրագրից, հետո ծանոթանալով Էմինի հակաֆեոդալական հայացքներին, նրան արտաքսում է Վրաստանից:

Հովսեփ Էմինը բարձր էր գնահատում Վրաստանի արքային, որը հայերի նկատմամբ ուներ հատուկ վերաբերմունք¹⁸:

¹⁶ Նույն տեղում, էջ 381-382:

¹⁷ А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, с. 249 («Նա հաստատ համոզված էր, որ իր գիրքը կկարդան երիտասարդ հայերը»):

¹⁸ Հ. Էմինն իր ինքնակենսագրության մեջ ունի բազմաթիվ հետաքրքրաշարժ ու անմոռաց դրվագներ: Ահա դրանցից մեկը պատմում է, թե ինչպես երիտասարդ մի վրացի ազնվական նրան տանում է Ծերեթել ու այնտեղ վրաց իշխանը սեփական ձեռքով գինին լցնում է Էմինի ար-

Հերակլ Երկրորդի վերաբերյալ հետաքրքիր փաստ է հաղորդում XX դարավերջի նշանավոր անգլիացի հայագետ Չարլզ Դաուսեթը՝ իր «Սայաթ-Նովա» մենագրության մեջ. «Իր թագավորության ընթացքում, Հերակլ Երկրորդը, որը որպես Բագրատիոնի գերդաստանի անդամ¹⁹, տեղյակ էր իր հայկական ծագմանը: Նրա ժամանակ Թիֆլիսի և Թելավի արքունիքները մշակույթի և քաղաքակրթության օազիսներ էին»:²⁰

ծաթե մեծ բաժակը, ասելով, թե նա հայերի մեջ առաջին մարդն է, որ արժանանում է նման պատվին, որ ինքն անձամբ գինի լցնի նրա բաժակը: Եվ առաջարկում է գրագ զալ հետևյալ պայմանով: Եթե Էմինը առաջին բաժակից հետո չպահանջի երկրորդը և երրորդը, այլ զսպի իրեն, ապա իշխանը նրան կնվիրի իր ձին: Էմինը համաձայնվում է՝ աչք ձգելով իշխանի հրաշալի ձիու վրա: Հետո խմում է գինին և չի հիշում, թե ինչպես է կերել իր հացը: Նրան թվում է, թե զլուխը ուռչում է և մեծանում, ինչպես Սուրբ Պետրոսի տաճարը (խոսքը Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարի մասին է – Պ. Ս.), իսկ բազուկները դառնում են ինչպես երկու կոթողներ: Մի քանի րոպե անց նա իշխանից խնդրում է երկրորդ բաժակը՝ ընդունելով, որ գինին հաղթեց իրեն, և ինքն այնքան մեծացավ, որ ոչ իր և ոչ էլ իշխանի ձին չեն կարող նրան կրել իրենց վրա, նույնիսկ փիղն իր մոտ թվում է փոքր երեխա: Էմինն այդ պահին ոչ միայն թվում էր հսկա, այլև դարձել էր մեծ հոետոր Կիկերոնը (տե՛ս «The life and adventures of Joseph Emin ...», p. 403»):

¹⁹ Խոսքը Վրաստանի թագավորական ընտանիքի հայ Բագրատունիներից սերելու մասին է – Պ.Ս.:

²⁰ Ch. Dowsett, Sayat-Nova, An 18th-century troubadour, Lovanii, 1997, p. 450:

Հովսեփ Էմինին հյուրընկալած վրաց իշխանը, հիշելով, որ Հերակլ Երկրորդը Էմինին արտաքսել է Վրաստանից, փորձում է իմանալ, թե նա ինչ կարծիքի է Վրաստանի թագավորի մասին: Էմինը ասում է, թե Հերակլ Երկրորդի և հարց տվող իշխանի միջև կա մեծ տարբերություն, որովհետև Հերակլը գերագույնն է ու խիզախ և սերում է մի շատ հինավուրց ընտանիքից: Էմինի մեջ եռում է հայկական արյունը և ավելացնում է, որ թե Հերակլը երկար տարիներ թրծվել է պատերազմներում, ու նա արժանի է լինելու Պարսկաստանի թագավորը:²¹

Լիովին հասկանալի է, թե ինչու Էմինը հենց Հերակլ Երկրորդի հետ էր կապում Հայաստանի ազատագրումը, և Գ. Դերիկյանը հեռատեսորեն ուզում է ամրացնել հայ-վրացական փոխհարաբերությունները, որոնք V-VII դարերում եղել են սերտ ու վերականգնվել են XI-XII և XVIII դարերում:

Աբգար Հովհաննիսյանն էլ իր գրքում ջերմորեն է խոսում Հերակլ Երկրորդի մասին. «Բոլոր ժամանակակից օտարերկրյա դիտորդները Հերակլին ներկայացնում են որպես ազդեցիկ պետական գործիչ, մեծապես օժտված և տաղանդավոր մարդ»:²²

²¹ „The life and adventures of Joseph Emin, p. 404:

²² А.Р. Иоаннисян, Иосиф Эмин, с. 107:

Որպես հեռատես պետական գործիչ՝ Հերակլ Երկրորդը ընկալում էր, թե Հայաստանի ազատագրումը թուրք-պարսկական լծից ինչպիսի վահան կարող է դառնալ Վրաստանը մահմեդական հարձակումներից պաշտպանելու համար: Ահա հենց դրա համար էլ. «Հերակլը լիովին ողջունեց Էմինի այցը Վրաստան: Անտարակույս, նա մեծ հետաքրքրություն ցուցաբերեց երիտասարդ հայի անձի նկատմամբ, որը կրթվել էր Եվրոպայում՝ ռազմական գործ սովորելով Անգլիայում: Էմինը նրա աչքին, նախ և առաջ, եվրոպական ձևով կրթված զինվորական մասնագետ էր, որն իրեն շատ պիտանի կլիներ»:²³

Հետաքրքիր է, որ ազգային-ազատագրական շարժման գործում մեծ դեր են սկսում խաղալ հայ հոգևորականները: Այդ առիթով Գ. Դևրիկյանն ընթերցողին ծանոթացնում է Մուշի Սուրբ Կարապետ վանքի պատմությանը: Սուրբ Կարապետ վանքը կոչվել է նաև Գլակա վանք:²⁴ «Ու նաև

²³ Նույն տեղում, էջ 109:

²⁴ Ահա թե ինչ է գրում Հովհան Մամիկոնյանն այդ վանքի մասին. «Իսկ Մամիկոնյան աշխարհը, թե հաճո է քեզ, ինչպես ինքդ էիր ասում, թե Իննակնյան կողմերն ինձ բաշխիր, այնտեղ հենց քո եղբորը ինքս ձեռնադրեցի եպիսկոպոս: Եվ նրա չափազանց թախանձանքների համար այդտեղի անունն էլ փոխեցինք ու նրա [ավելի] անունը Գլակա վանք դրինք» (Տե՛ս Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Վարդան Վարդանյանի, Երևան, 1989, էջ 25):

Իննակյան վանք էին ասում՝ շրջակայքում գտնվող ինն աղբյուրների պատճառով: Եվ ուխտավորները միշտ էլ անպակաս էին»:²⁵

Սուրբ Կարապետ վանքում է պահվել Հովհաննես Մկրտչի մասունքները, որոնք այդ վանքին են պահ տվել Գրիգոր Լուսավորիչը:

Ըստ Գ. Դերիկյանի՝ բացի այդ հազվագյուտ հոգևոր սրբությունից, որ ուներ Սուրբ Կարապետ վանքը, այդ տաճարում էին գտնվում Մուշեղ Մամիկոնյանի ու Գայլ Վահանի շիրիմները: Գայլ Վահանը՝ Վահան Մամիկոնյանն է, որն այդպես է կոչվել իր խիզախության ու համարձակության համար և եղել է Հայոց ու Վրաց աշխարհների բարիդրացիության ջատագովը: Եվ պատահական չէ, որ ապագա ապստամբներին վանահայրը երդվեցնել է տալիս նրանց շիրիմների մոտ:

Այս ապստամբության նախապատրաստման մանրամասների մասին խոսել է Լեոն իր «Հայոց պատմության» մեջ. «Ամառն Էմինը գնում է Հերակլի հետ Կախեթ՝ ամառանոց: Այդտեղից նա նամակագրություն է սկսում Ղարաբաղի մելիքների և Մուշի Ս. Կարապետի վանքի վանահոր հետ: Դժվար չէ գուշակել, թե ինչ բովանդակություն պիտի ունենային այդ նամակները: Ս. Կարապետի վանահայրն իսկույն

²⁵ Գ. Դերիկյան, Վիրավոր կռունկ, էջ 581:

պատասխանում է, որ ամեն ինչ պատրաստ է գործն սկսելու համար, և եթե Էմինը կարողանա գոնե մի 50 վրացի ձիավորներով գնալ Մուշ, ինքը՝ վանահայրը, իսկույն նրա տրամադրության տակ կդնի 4000 զինված հայեր: Վրացի ձիավորներն, ասում էր Հովհան արքեպիսկոպոսը, անպատճառ հարկավոր են, որպեսզի թուրքերն իմանան, որ վրաց թագավորն Էմինի բարեկամն է»:²⁶

Պատմությունից հայտնի է, որ Հովսեփ Էմինի ազգային-ազատագրական ձգտումներն ու այդ ուղղությամբ միջոցառումները չհասան որևէ արդյունքի: Սակայն վիպասանը իր գիրքն ավարտում է մարտական ու հաղթական շեշտերով. «Երթն սկսվեց: Արագ վարգ առավ վանահոր նժույզն ու մյուս հեծյալները հետևեցին: Սլանում էին նժույզները, և ամբակները դիպչելով որձաքարերին, կայծեր էին սփռում: Եվ վրեժի կայծը հուր էր բորբոքում հեծյալների աչքերում: Սլանում էին նրանք, և անկանգ էր սլացքը:

Իսկ հեռու հորիզոնում բարձրանում էր բոսորագույն արևը:

Արևը նման էր պղնձակոփի վահանի...»:²⁷

²⁶ Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք երկրորդ, Երևան, 1973, էջ 293-294:

²⁷ Գ. Դևրիկյան, Վիրավոր կռունկ, էջ 594:

Գ. Դերիկյանի վեպը նաև բանահյուսական նյութերի հարուստ ժողովածու է: Դրանք հիմնականում Ակն քաղաքի բանավոր հյուսվածքներ են, որոնք վիպասանը փոխ է առել հայ բանահավաքներից՝ դրանք համապատասխանեցնելով իր վեպի ասելիքին:

Հայ միջնադարյան գրականության և հին ու նոր բանահյուսության չգերազանցված գիտակ Մանուկ Աբեղյանը անտունի երգերի առթիվ խոսել է Ակն քաղաքի անտունիների մասին: Նա թվարկում է, թե որ բանագետներն են գրառել ու հրատարակել Ակնի անտունիները՝

1. Գարեգին Սրվանձտյանց, «Համով-հոտով», 1884,
2. Հ. Կ. Ճանիկյան, Հնութիւնք Ակնայ, 1893,
3. Տ. Վ. Պայյան, «Բիւրակն» լրագիր, 1894:²⁸

Համոզված ենք, որ Գ. Դերիկյանը ծանոթ է եղել այս հրապարակումներին և այդտեղից է քաղել այն բազմաթիվ հյուսվածքները, որոնք ուղղակի սփռված են «Վիրավոր կռունկ» վեպում: Դրանք սիրո, կարոտի, հայրենաբաղձության երգեր են, որոնք ունեցել են համապատասխան մեղեդիներ: Ըստ երևույթին այդ մեղեդիները շատ համակող էին և հանգստացրել են պանդուխտ մարդու հոգու խռովքը:

Վեպի գլխավոր հերոսն այնքան էր սիրում իր ազգային երգը, որ Խաչերես գրչի տաղարանի համար պատրաս-

²⁸ Մ. Աբեղյան, Երկեր, Բ, Երևան, 1967, էջ 226-227:

տում է պղնձե շքեղ մի կազմ, որի վրա կային թռչուններով պատկերներ, կային ծաղիկներ ու թվում էր, թե կազմն անգամ երգ էր: Արթինը նույնիսկ հրաժարվում է վարձ վերցնել իր հիասքանչ աշխատանքի դիմաց: Նա գրչին բացատրում է. «Դրամ վաստակելը չի եղել երբեք իմ տենչը և չի լինելու: ...Արժե՞ հոգին ոսկու ժանգով պատել»:²⁹

Գ. Դերիկյանի օգտագործած բանահյուսական երգերի մեջ կա նաև Ակնի օրորոցային երգերից.

Դուն ապրիս հօրով մօրով,
 Հաց նստիս ջուխտակ աղբարով:
Ապրիս դուն հօրով մօրով,
 Ու լցուի սրտիկտ արևով:

Սրտիկտ արևով լցուի,
 Մեր դռուին կարմիր խնձորով,
Ով անցնի՝ վաղեկտ առնէ,
 Ո՛վ դառնայ, կարմիր խնձորէն:³⁰

Վեպում կան նաև սրտառույչ սիրերգեր: Նրանցից մեկում պատկերված է, թե ինչպես երկու գեղեցիկ աղջիկ եկել են աղբյուրը ջրի, ու երկու կտրիճ տղա նրանցից ջուր են

²⁹ Գ. Դերիկյան, Վիրավոր կռունկ, էջ 125:

³⁰ Նույն տեղում, էջ 363:

խնդրում: Ահա թե ինչ երկխոսություն է ընթանում կտրիճների ու աղջիկների միջև.

- Աղջի՛կ, աղբօրտ արևուն,
Նօշըպէն պտիկ մի ջուր տուր:
- Ջուրս տաք է, չէ՛ պաղեր,
Մեր սիրուն շատ մարդ է մեռեր:
- Թո՛ղ իսմիմք ու թո՛ղ մեռնինք,
Հաշուիմ, թը մարըս չէ՛ բերեր:³¹

Վեպում մեջբերում կա նաև «Սասնա ծռեր» էպոսի առաջին ճյուղի այն հատվածից, որը պատմում է, թե ինչպես Սանասարն ու Բաղդասարը սպանում են Բաղդադի խալիֆին ու փախչում Հայաստան:

Հետաքրքիր մի եզրահանգում ունի վիպասանը: Երբեմն իսկական հայրենասերները լիովին մոռանում են անձնական կյանքն ու իրենց նվիրում միայն հայրենիքին ու հայրենակիցներին: Հենց այդպիսի նվիրյալներ են վեպի գլխավոր հերոս Արթինը, նաև քարավանապետ Հակոբը:

«Վիրավոր կռունկ» վեպում մի ժամանակվա փառահեղ հայկական քաղաք Ակնը պատկերված է անցյալ փառքի և հետագա թշվառության բոլոր դրսևորումներով:

³¹ Նույն տեղում, էջ 369:



ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

Գ. ԴԵՎՐԻԿՅԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԵՐԸ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Գևորգ Դևրիկյանի արձակի հիմնական թեման հայրենասիրությունն է: Այդ սրբազան գաղափարին է նվիրված նաև նրա «Վերջին խոսքերը» պատմվածքը, որը ներկայացնում է IV դարի խիզախ սպարապետ Մանվել Մամիկոնյանի մահվանից առաջ արտասանած խոսքերի պատգամային բնույթը:

Այս պատմվածքը ավագ դպրոցում ծրագրային չէ, սակայն գրական խմբակի համար ուսուցչին կօգնի մի շարք կապեր և գուգահեռներ անցկացնել ծրագրային տարբեր երկերի

հետ: Դրանցից են Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը», Բաֆֆու «Սամվել» վեպը, Դ.Դեմիրճյանի «Վարդանանքը», Մուրացանի «Գևորգ Մարգպետունին»:

Կարող է զարմանալի թվալ, թե այս թվարկման մեջ ինչ գործ ունեն «Վարդանանքը» (V դար) և «Գևորգ Մարգպետունին» (X դար): Սակայն ունեն, որովհետև ոչ մի իսկական պատմավիպասան չի սահմանափակվում միայն իր նկարագրած ժամանակահատվածի պատմությունն ուսումնասիրելով, այլ քաջատեղյակ է հայ ժողովրդի պատմության ողջ ընթացքին: Եթե գրում է միջնադարի մասին, ապա ծանոթանում է միջնադարյան հայ բոլոր պատմիչների գործերին և երբեմն օգտակար նյութ է քաղում դրանցից: Օրինակ, «Սամվել» պատմավեպը նկարագրում է IV դարի 50-60-ական թվականների իրադարձություններ, սակայն նրանում կա հատված, որը Բաֆֆին քաղել է X դարի պատմիչ Թովմա Արծրունուց: Խոսքը վերաբերում է Հայաստանի աշխարհագրական նկարագրին և առանձին նախարարությունների միմյանցից կտրված լինելուն: «Գևորգ Մարգպետունի» վեպի ավարտի հատվածը հիշեցնում է Փավստոս Բուզանդի մոտ եղած Սամվել Մամիկոնյանի մահվան տեսարանն ու հրաժեշտի հայրենասիրական խոսքերի բովանդակությունը: Միայն թե այս դեպքում իր հայրենասիրական պատգամները հարազատներին ուղղում

է Գևորգ Մարգարէտունին: Իսկ «Վարդանանք» պատմավեպը ներկայացնում է ամենահայրենասէր հայ սպարապետին՝ Վարդան Մամիկոնյանին, որը մի խումբ նախարարների գորքով և հիմնականում աշխարհագորով գնաց Ավարայրի դաշտ և նահատակվեց հանուն ազգային ինքնուրույնության:

Մանվել Մամիկոնյանի մասին «Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարանում» կարդում ենք. «Մանվել Մամիկոնյան – ծննդյան թվականը անհայտ, մահացել է մոտավորապէս 385 թվականին: Հայոց սպարապետ 377-ից, Կարինի դաշտում հաղթել է (ըստ երևույթին՝ պարսկական հեծելազորի օգնությամբ) Հայոց թագավոր Վարազդատին, գահընկեց արել նրան, գերել ու գլխատել սպարապետ Բատ Սահառունուն: Հայ նախարարների համաձայնությամբ թագավոր է հռչակել Պապի անչափահաս որդի Արշակ Գ-ին (378-մոտ 390)՝ արքայամայր Զարմանդուխտի հետ ստանձնելով նրա խնամակալությունը: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մանվել Մամիկոնյանը օգտվելով Պարսկաստանում տիրող անկայուն իրադարձությունից, Հայաստանի համար 7 տարի ձեռք է բերել լիակատար անկախություն և զբաղվել խաղաղ շինարարական գործերով»:¹

¹ Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, հ. 2, Երևան, 2007, էջ 37:

Ինչպես երևում է Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունից, Մամիկոնյան սպարապետները եղել են նրա սիրելի գորահրամանատարները՝ անձեր, որոնք հաճախ իրենց կյանքի գնով նպաստել են հայ պետականության ամրապնդմանը: «Վիրավոր կռունկ» վեպում գրողը XVIII դարի ազգային-ազատագրական պայքարին զինվորագրված հայ կամավորականներին իր հերոսի անունից խրախույս է հղում՝ հիշեցնելով Մամիկոնյան սպարապետների ազգափրկիչ գործերը. «Եվ քեզ եմ ասում Մամիկոնյանդ Մուշեղ: Օրհնիր մեզ և գործը մեր: Եվ սուրը մեր արդար: Դու, որ տիվու գիշեր ջանում էիր, որ ոչ մի չափ հող հայոց երկրից չլսեն թշնամիներդ: Ջորավարդ Մուշեղ, քո կյանքը բոլորանվեր դրեցիր հայոց հողի համար: Եվ ավա՛ղ, քո մահն էլ ձիու վրա չեղավ: Չեղավ, քանզի զոհն էիր խարդավանացն թշնամիներիդ և մանկամիտ վարքին ողբալի և օտարամիտ թագավորի: Թող քո սուրը հիմա շողա հայոց քաջերի ձեռքին»:²

«Վերջին խոսքերը» պատմվածքում ևս Մուշեղ Մամիկոնյանին անդրադարձ կա: Մահվանից առաջ Մանվել Մամիկոնյանը հիշում է Մամիկոնյան սպարապետների անցած ուղին ու նշում, թե ինչպես է նախատել Վարազդատ արքային Մուշեղ Մամիկոնյանին կյանքից զրկելու համար:³

² Գ.Դերիկյան, Վիրավոր կռունկ, Երևան, 1977, էջ 588:

³ Գ.Դերիկյան, Պատմվածքներ, Ս.Էջմիածին, 1997, էջ 27:

Պատմվածքում շեշտվում է Մամիկոնյանների վաղնջական ու հինավուրց տոհմ լինելը:

Մանուկ Աբեղյանի կարծիքով Փավստոս Բուզանդը իր «Հայոց պատմությունը» քաղել է հայ ժողովրդական «Պարսից պատերազմ» վեպից և լիովին հարազատ մնացել վեպի հայ-րենասիրական ոգուն:

Պարսից պատերազմը III դարում հայերի ու պարսիկների միջև սկսվեց այն ժամանակ, երբ Պարսկաստանի Արշակունի գերդաստանը գահընկեց արվեց, և գահ բարձրացավ Արտաշիր Պապականը: «Պապակի որդի Արտաշիրը չորս տարվա ընթացքում կարողացավ ջլատել թուլացած պարթև Արշակունիների վերջին ուժերը: 227թ. ապրիլի 28-ին տեղի ունեցած Որմիզդակյանի վճռական ճակատամարտում սպանվեց պարթևական վերջին թագավոր Արտավան Ե-ն: Պարթևական թագավորությունը կործանված էր»:⁴

Պատմական այս խոշոր իրադարձության հետևանքով խիստ սրվում են Հայոց Արշակունիների և Պարսկաստանի Մասանյան դինաստիայի փոխհարաբերությունները, և դրանք հանգեցնում են պատերազմների: Այդ պատերազմները սկսվում են Տրդատ Մեծի ժամանակներից և շարունակվում են Խոսրով Կոտակի, Տիրանի, Արշակ Երկրորդի,

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, Երևան, 1984, էջ 23:

Պապի, Վարազդատի և Արշակ Երրորդի օրերին: Այս մասին է հենց Փավստոս Բուզանդի ողջ պատմությունը:

Մանուկ Աբեղյանը տողատել է Փավստոսի երկը «Մասնա Ծոեր» էպոսի ձևով և նրանում ահա թե ինչպես է բնութագրում Մանվել Մամիկոնյանը Հայոց գահին տիրացած Վարազդատին.

Նա մեք չեմք իսկ լեալ ձեր ծառայք,
Այլ ընկերք ձեր և ի վերոյ քան զձեզ.
Զի մեր նախնիքն լեալ էին
Թագաւորք աշխարհին ճենաց:⁵

Հայ-պարսկական հարաբերություններն առավել սրվեցին Արշակ Երկրորդի գահակալության ժամանակ: Ըստ Բուզանդի՝ վերջինս չէր ուզում ենթարկվել ոչ բյուզանդացիներին և ոչ էլ իրեն գերիշխող Պարսկաստանին: Եվ Շապուհը քավդեաների խորհրդով հայկական հողով ու ջրով փորձում է Արշակին ու պարզում է, որ Արշակը ազգային հողի վրա ըմբոստ է.

⁵ Մ.Աբեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 200: («Մենք մինչև անգամ ձեր ծառաները (հպատակները) չենք, այլ ձեր ընկերներն ենք և ձեզանից ավելի բարձր, որովհետև մեր նախնիքը ճենաց աշխարհի թագավորներ են եղել» (Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 367):

Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ,
Տիրացեալ տերանցն քոց,
Այլ ոչ թողից քեզ և որդւոց քոց
Զվրէժ նախնեաց իմոց,
Եւ զմահն Արտնանայ արքային:⁶

Մանվել Մամիկոնյանը գիտեր, թե որքան տիրասեր էր եղել իր նախնի Վասակ Մամիկոնյանը, որին մորթագերծ էր արել Շապուհը, իսկ Հայոց Վարազդատ արքան սպանել է տալիս հայրենիքին անսահման նվիրված Մուշեղ Մամիկոնյանին: Ահա թե ինչ է ասում Գ.Դերիկյանի պատմվածքում Մանվել Մամիկոնյանը Վարազդատին. «Մենք՝ Մամիկոնյաններս, հնուց անտի ողջ տոհմով ծառայել ենք Ձեզ՝ Արշակունիներիդ, որոնց մեջ ամենաանարժանը դու եղար: Եվ սակայն ի գին մեր զոհողությունների, սաստիկ երախտամոռ գտնվեցիր և կենաց արևից մեր արյունակից Մուշեղին զրկեցիր»:⁷

«Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հատորում ևս կրկնվում է Փավստոս Բուզանդի հաղորդածը Ման-

⁶ Մ.Աբեղյան, Երկեր, Գ, էջ 220: («Հեռո՛ւ ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը» (Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 259):

⁷ Գ.Դերիկյան, Պատմվածքներ, էջ 27:

վել Մամիկոնյանի ու Վարազդաստ արքայի հակամարտության վերաբերյալ: Մանվել Մամիկոնյանը «...վրեժ է պահանջում իր եղբոր՝ Մուշեղ Մամիկոնյանի սպանության համար»:⁸ Բացի այդ, նշվում է, թե Վարազդաստը նույնիսկ Արշակունի չի, որովհետև ապօրինաձին է: Վարազդաստի մասին պատմվածքում կարդում ենք. «...դու չես նրանց տոհմից ու զարմից և անբարո ծնունդ ես պատահական»:⁹

Այս պատմական տեղեկությունները ուսուցչի համար պետք է լինեն պարտադիր գիտելիք: Գրական խմբակին մասնակցող ամեն մի աշակերտ հասկանում է, որ գրականությունը, նրա հետ մեկտեղ գրականագիտությունը անհազ ընթերցելու ձգտում ունեցող աշակերտների ոլորտն է, և այդ չթուլացող ընթերցանությունը և հետազոտողի ջանասիրությունը նրան ուղեկցելու են ողջ կյանքում: Իսկ դրա խոսուն օրինակը հենց ուսուցիչն է, որ դասագրքից ու ծրագրային նյութերից դուրս ունի գիտելիքների մեծ պաշար: Հենց այդ խորագետ լինելն էլ կարող է հիմք դառնալ գրական խմբակի ցանկալի արդյունքին:

Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ կան գրական կերպարներ. ինչպես Մանուկ Աբեղյանն է բնորոշել այդ պատմությունը վեպ է, և այդ վեպի անմոռաց կերպարնե-

⁸ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 108:

⁹ Գ.Դևրիկյան, Պատմվածքներ, էջ 27:

րից է հենց Մանվել Մամիկոնյանը, որն իր մահվան անկողնում անգամ մտածում է հայրենիքի մասին: Նա իր մոտ հավաքված հարազատներին, ընտանիքի անդամներին ցուցադրում է իր մերկ մարմինը, որն ամբողջովին պատած էր պատերազմում ստացած վերքերի սպիերով և շատ է ափսոսում, որ չի մեռնում պատերազմի դաշտում, հայրենիքը պաշտպանելիս. «Ես շատ հանդուգն էի ինձ պահում (պատերազմների մեջ), բայց և այնպես ինձ վիճակվեց մեռնել վատթար մահով՝ անկողնում պառկած»:¹⁰

Մահվանից առաջ ասված Մանվել Մամիկոնյանի խոսքերը Գևորգ Դերիկյանի գրչի տակ դարձել են գեղարվեստորեն խիստ տպավորիչ. «Մի թե՛ Մամիկոնյաններն իրավունք ունեն մահիճում մեռնելու: Նրանք մահ են գտնում նժույգի վրա կամ ծանր վերքերից, մորթազերծ էին արվում, ինչպես Վասակ Մամիկոնյանը հպարտ, կամ ընկնում դավադիր ձեռքերից, որպես նրա Մուշեղ որդին: Եվ մի թե՛ ես՝ Մանվել Մամիկոնյանս, պիտի կնքեի մահկանացուս այսպիսի անարգ մահով»:¹¹

Մեզ ծանոթ են հայ գրականության ուսուցման բոլոր ինովացիոն ձևերը և դրանցից ընտրել ենք երկուսը, որոնք

¹⁰ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 393:

¹¹ Գ. Դերիկյան, Պատմվածքներ, էջ 32:

խիստ հարմար են Գևորգ Դերիկյանի «Վերջին խոսքերը» ավագ դպրոցի գրական խմբակում ուսուցանելու ժամանակ:

1. ԲԱՌԱՊԱՇԱՐ ՀԱՐՄԱՑՆՈՂ

Անուն՝ Գևորգ Դերիկյան

Գրքի վերնագիրը՝ «Վերջին խոսքերը»

Առաջադրանք՝ ողջ պատմվածքից դուրս գրել և բացատրել այն բառերը, որոնք քիչ գործածական են, և դրանց բացատրությունն ու յուրացումը անպայման կհարստացնի գրական խմբակի անդամի բառապաշարը:

Բառերի բացատրությունը աշակերտների համար վերցրել ենք էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան» աշխատության երկու հատորներից:¹²

Ամեն բառի կողքին կնշվի Գ.Դերիկյանի «Վերջին խոսքերը» պատմվածքի համապատասխան էջը:

Աջ ու ահյակ (էջ 22) – աջ ու ձախ

Դիտապաստ (էջ 22) – դիակի պես գետնին փռված

Հյուղակ (էջ 23) – փոքր խրճիթ

Բանագնաց (էջ 23) – պատգամավոր, բանակցություն վարող

¹² Է.Բ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-Ձ, Երևան, 1976, Շարունակություն, Երևան, 1976:

- Որմեր (էջ 23) – պատեր
 Խոտորում (էջ 25) – ծռում, թեքում, շեղում
 Վրեժ (էջ 25) – փոխհատուցման բուռն ցանկություն,
 մտադրություն, ձգտում
 Քեն (էջ 25) – թշնամանք, ատելություն
 Ունկ (էջ 26) – ականջ
 Չարմ (էջ 27) – ժառանգ, որևէ տոհմի շառավիղ՝
 հետնորդ
 Չանցանք (էջ 29) – պարտադիր օրենքի ուժ ստացած
 կանոնների հակասող արարք
 Հեղել (էջ 30) – թափել
 Հեղ (էջ 32) – անգամ

2. ՔԱՌԱԲԱԺԱՆՈՒՄ (աշխատանք բնագրի շուրջ)

Չայներ	Երկու հիմնական արտահայտություն
1. Կոմիտասի «Գարուն ա, ձյուն ա արել» երգի մեղեդին:	1. Երկիրը մեկ արքա ու մեկ տեր է ունենալու, սակայն, ցավոք, մենք մեր բնույթով արքաներին չենք հանդուրժում:
2. Արամ Խաչատրյանի «Սուսերով պարի» երաժշտությունը	2. Ինչո՞ւ ես հանուն հայրենյաց

	<p>չմեռա պատերազմի դաշտում սուրը ձեռքիս, ինչո՞ւ ես այդ քախտին չարժանացա...</p>
<p style="text-align: center;">Հիմնական գաղափարը</p> <p>1. Մամիկոնյան սպարապետները մշտապես ծառայել են Արշակունի թագավորներին և իրենց կյանքը զոհել են հանուն նրանց:</p> <p>2. Սպարապետի գերագույն պարտքն է իր կյանքը նվիրաբերել հայրենիքի պաշտպանության ու նրա անկախության սրբազան գործին:</p>	<p style="text-align: center;">Տրամադրություն</p> <p>Վսեմ զգացմունքներ՝ կապված հայրենիք գաղափարի հետ:</p>

Գրական խմբակը չպետք է կրկնի ուսումնական պարտադիր ծրագրի նյութերի ուսուցումը, այլ հայ գրականության երկերը պետք է ուսուցանի առավել մեծ ընդգրկումով: Ահա այդ ընդգրկման ոլորտում է հենց Գևորգ Դերիկյանի «Վերջին խոսքերը» անմոռաց պատմվածքը, որն

ունի ոչ միայն գրական-գեղարվեստական, այլև պատմական
մեծ արժեք:



ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

**ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ
ԸՍՏ Գ. ԴԵՎՐԻԿՅԱՆԻ «ՀԱՎԱՏԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ» ՊԱՏՄՎԱԾՔԻ**

*«Շնորհեա մեզ, Տէ՛ր, ի գիշերի
Զխաղաղությիւն քո զերկրային...»
Ու խաղաղ է ծուփքը ջրրի,
Զի Աստուած ընդ մեզ է...*

Հովհ. Թումանյան

«Աստուած ընդ մեզ է...»

(Ազգային ավանդություն)

Հայաստանը 301 թվականին աշխարհի առաջին պետությունն էր, որ քրիստոնեությունը դարձրեց իր երկրի միակ ու պաշտոնական կրոնը: Մա համաշխարհային պատմության մեջ գրանցված ու հաստատված փաստ է: Մակայն

ինչպես հավաստում են զանազան պատմական աղբյուրներ՝ օտար և հայկական, արդեն Հիսուս Քրիստոսի ժամանակ և նրանից անմիջապես հետո Հայաստանում հայտնվել են առաջին քրիստոնյա հավատացյալները:

Գևորգ Դերիկյանը հիմնականում ստեղծագործել է քսաներորդ դարի վերջին տասնամյակներին և ստեղծել պատմական ու ճանաչողական, նաև գեղարվեստական առումով խիստ ինքնատիպ գրականություն: Նա առանձին սեր է ունեցել Հայաստանի անցյալի նկատմամբ՝ հատկապես նրան հետաքրքրել է այն ամենը, ինչ կապվում է քրիստոնեությունը Հայաստանում տարածվելու փաստին՝ վաղ շրջանից մինչև հետագա դարերը, երբ Մաշտոցյան այբուբենով ստեղծվեց հարուստ քրիստոնեական հայ գրականություն: Սա այնքան բնորոշ է եղել հայ մատենագրությանը, որ բազմաթիվ եվրոպացի հայագետներ հատուկ ծավալուն հետազոտություններ են նվիրել քրիստոնյա Հայաստանի գրականությանը: Դրա ամենախոսուն օրինակները միջազգային բանասիրությանը, պատմագիտությանը և գրականագիտությանը տվել են Ֆելիքս Ներ¹ և Էդուարդ Դյուլորիեն², որոնք միջնադարյան

¹ Sté u F. Ne' ve, L'Armenie Chrétienne et sa littérature, Louvain, 1886.

² Sté u Recueil des Historiens de croisades, documents arméniens, t. I, Paris, 1869: Այս գրքի մասին Ա.Դուլուխանյանը գրում է. «Եվրոպացի հայագետ-

հայ մատենագրությանը նվիրել են սովարածավալ հատորներ:

Քրիստոնեության արշալույսին Հայաստանի առաջին հավատացյալը եղել է Աբգար արքան: Նրա քրիստոնյա դառնալու մասին մանրամասն գրում է պատմահայր Մովսես Խորենացին: Վերջինս օգտվել է ասորի պատմիչ Լաբուբնայի հաղորդած փաստերից:

Առաջին հայ քրիստոնյաների մասին Խորենացին գրել է նաև իր մեկ այլ ստեղծագործության մեջ՝ «Պատասխանի թղթոյն Սահակայ, յորում եւ բանք մարգարէա կանք եւ վասն փոխման Աստուածածնին, թէ որպէս եղեւ կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի փայտն եւ թէ յոյր ձեռն եւ զինչ եղեւ պատճառք խնդրոյն կամ թէ յումմէ բերաւ ի Հայս»:³ Պատմահոր թղթի վերնագիրը հուշում է գրական այս հուշարձանի բովանդակությունը: Այն պատմում է, թե ինչպես Մարիամ Աստվածածնի փայտի վրա պատկերված նկարը, որը Աստվածամայրը մահվանից առաջ օրհնել էր հրաշքներ գործելու համար, Բարդուղիմեոս առաքյալը

ներից ոչ մեկը այդքան սովարածավալ որևէ ժողովածու չունի: Գրքի քաշը շատ ծանր է, և դժվար է տեղից տեղ շարժել. իր չափերով հիշեցնում է «Յայսմատուրք» ժողովածուները»: Տե՛ս Ա.Դոլուխանյան, Էդուարդ Դյուլորիեն հայագետ, Երևան, 2004, էջ 21:

³ Մովսես Խորենացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 281-296:

բերում է Հայաստան և զետեղում իր կողմից կառուցված Հոգեաց վանքում:

Գևորգ Դերիկյանը Աբգար արքայի կերպարը կերտել է «Հավատի գործությունը» ծավալուն պատմվածքում: Բնականաբար մինչև իր պատմվածքի շարադրելը նա մանրախույզ ծանոթացել է Բագում պատմական աղբյուրների, որոնք նրան նյութ են մատակարարել Աբգար թագավորի մասին: Որպես առաջին հայ քրիստոնյա՝ Աբգարը ճանաչված է հայ քրիստոնեական եկեղեցու սուրբ. «Աբգար, սուրբ Աբգար, ըստ ավանդության առաջին դարի անդրանիկ քրիստոնյա թագավորը, պարթև Արշակունի Արշամի որդին»:⁴

Ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանը, որը Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» թարգմանել է աշխարհաբարով, իր թարգմանության «Ներածության» մեջ ակնարկունի Եդեսիա կամ Ուռհա քաղաքի պատմական անցյալի մասին: Եդեսիան Արևելքի կրթական կարևոր կենտրոններից էր, պատահական չէ, որ Մովսես Խորենացին և նրա հետ Ալեքսանդրիա մեկնող հայ ուսանողները որոշ ժամանակ կանգ են առնում Եդեսիայում ու պարապում տեղի հարուստ գրադարանում և այդ փաստը վկայակոչում է իր «Հայոց պատմության» մեջ. «Կսկսենք պատմել քեզ Ափրիկանոս ժամանակագրի հինգերորդ գրքից, որին վկայում են Հովսեպոս և Հյու-

⁴ «Քրիստոնյա Հայաստան», հանրագիտարան, Երևան, 2002, էջ 7:

պողիտա և ուրիշ շատերը հույներից: Որովհետև նա ամբողջապես փոխադրեց (հունարենի)՝ ինչ որ Եդեսիայի, այսինքն Ուռհայի դիվանում գրվածքներ կային մեր թագավորների մասին: Այս մատյաններն այնտեղ փոխադրված էին Մծբինից և Պոնտոսի Սինոպից, մեհենական պատմություններից: Թող ոչ ոք չկասկածի, **որովհետև մենք ինքներս մեր աչքով տեսանք այդ դիվանը**: Եվ մերձավոր վկա ու երաշխավոր թող լինի Եվսեբիոս Կեսարացու եկեղեցական (պատմության) գիրքը, որը մեր երանելի ուսուցիչը՝ Մեսրոպ Մաշտոցը, թարգմանել տվեց հայերեն: Փնտրել տուր այս գիրքը Գեղարքունիքում՝ Սյունաց գավառում, և կգտնես առաջին դպրության տասներեքերորդ գլխում, որտեղ վկայում է, թե Եդեսիայի դիվանում եղել են մեր առաջին թագավորների բոլոր գործերը մինչև Աբգար և Աբգարից հետո մինչև Երվանդ: Եվ կարծում եմ, որ մինչև այժմ էլ պահվելիս կլինի նույն քաղաքում»:⁵

Եդեսիան այնքան կապված է Աբգարի անվան հետ, որ տասներկուերորդ դարի ժամանակագիր Մատթեոս

⁵ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 137:

Ուռնհայեցին իր երկում Եղեսիան կոչում է «Աբգարի երկիր»⁶, «Աբգարի տուն»:⁷

Հրաչ Բարթիկյանը Եղեսիայի վերաբերյալ հաղորդում է մեկ այլ կարևոր փաստ. «Դեռ ավելին, հայերը, այդ թվում և Մատթեոս Ուռնհայեցին, համոզված էին, որ Եղեսիան հայոց արքա Տիգրանն է հիմնադրել»:⁸

Աբգարի կերպարը ուղեկցել է հայ ժողովրդին. այն հայտնվել է տարբեր դարերի ձեռագիր ու տպագիր տաղարաններում և գանձարաններում: Նրա մասին գրում է նաև Միքայել Չամչյանցը իր «Պատմութիւն Հայոց» երկի Ա հատորում. «Յադագս հաւատալոյ Աբգարու ի Քրիստոս ի ձեռն Թադէի և գրելոյ նորայ թուղթս»:⁹

Աբգար թագավորին նվիրված գանձ կա 1740 թվականին Կ.Պոլսում տպագրված «Տաղարան-Գանձարանում»:¹⁰

1744 թվականին Ղազար Ջահկեցին Կ.Պոլսում հրատարակում է «Երգարան», որում զետեղված է նաև Աբգար թագավորին նվիրված հոգևոր մի երգ:¹¹

⁶ Մատթեոս Ուռնհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 210:

⁷ Նույն տեղում, էջ 218:

⁸ Նույն տեղում, էջ IV:

⁹ Մ.Չամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 286-294:

¹⁰ Ն.Ա.Ոսկանյան, Ք.Ա. Կորկոտյան, Ա.Մ. Սավալյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան, 1988, էջ 361ա:

¹¹ Նույն տեղում, էջ 379 բ:

Գևորգ Դերիկյանն իր «Հավատի գորությունը» պատմվածքը սկսում է Աբգար թագավորի ծանր հիվանդությունից և հետո միայն շատ հետաքրքիր ձևով ներկայացնում նրա և Հռոմի կապի մասին. «Ծանր հիվանդ էր Աբգար թագավորը, որին օտարներն անպայման Հայոց էին անվանում: Նախկինում, երբ զանազան թղթեր էր ստանում հարևան արքունիքներից ու թագավորներից և իմաստուններից, մի հաճելի զգացում էր ապրում, երբ կարդում էր՝ «Հայոց Աբգար թագավորին շատ ողջույն»: Սակայն հիմա այլևս չէր կարողանում ընթերցել նրանց գրածը, թեև գիտեր հունաց, հռոմեացոց, եբրայեցոց և էլի լեզուներ: Չէր կարող, քանզի նվազել էր աչաց լույսը, և գոսացել էին ձեռքերն ու ոտքերը և արծաթե հայելու մեջ, երբ սկսվել էր այս ախտը, նշմարել էր, թե սևանում է և դեմքը»:¹²

Արքան հիվանդ էր անբուժելի ախտով: Այս առիթով Մովսես Խորենացին ներկայացնում է, թե Աբգարը Պարսկաստանում եղած ժամանակ յոթը տարի առաջ հիվանդացել էր անբուժելի հիվանդությամբ և որևէ մարդ չէր կարողանում այդ հիվանդությունը բուժել:¹³

Այդ նույն դեպքը առավել համառոտելով պատմում է Հովհաննես Դրասխանակերտցին իր «Հայոց պատմության»

¹² Գ.Դերիկյան, Պատմվածքներ, Ս.Էջմիածին, 1977, էջ 4:

¹³ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 175:

մեջ հետևյալ ձևով. «Բայց Աբգարի մարմինը ապականվում է չարաչար ախտով, և նրան հավատարիմ՝ Աղձնիքի Մարի-խար բղեշխը, Ապահունիքի Շամշագրամ նահապետը և Անանը գնում են Երուսաղեմ և տեսնում մեր Քրիստոս Աստ-ծու հրաշալի բժշկությունը, գալիս պատմում են Աբգարին: Դրա համար նա աղաչագիր է գրում [փրկչին], որպեսզի գա և բուժի այդ հիվանդությունը, որի բուժումը մարդկանցից ոչ ոք չգտավ»:¹⁴

Ինչպես հստակ երևում է ոչ Մովսես Խորենացին և ոչ էլ նրա հետևողյամբ իր պատմությունը շարադրած Հովհան-նես Դրասխանակերտցին չեն տալիս այն անբուժելի հիվան-դության անունը, որով հիվանդ էր Հայոց Աբգար արքան: Այս հիվանդության անունը կա Գևորգ Դերիկյանի պատմված-քում, որում տեսնում ենք, որ Հայոց Աբգար թագավորը եղել է հոգատար միապետ ու գլխավոր գորահրամանատար: Հասարակ շինականները սիրում էին իրենց արքային ու թագավորական պալատ էին բերում ընտիր մրգեր, կաթ ու մածուն, ճերմակափրփուր հաց:

Արդեն Մ. Խորենացուց իմանում ենք, որ Աբգարը հի-վանդացել է պարսիկների դեմ պատերազմելիս: Դերիկյանը

¹⁴ Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Աշխարհա-բար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ.Բ.Թոսունյանի, Երևան, 1996, էջ 37:

գրում է, որ որպես մարդասեր գահակալ, այցելում էր իր բոբոտ զինվորներին ու կերակրում նրանց, նույնիսկ իր ձեռքով փակում մեռածների աչքերը: Սա էլ դառնում է նրա հիվանդության պատճառը: Անշուշտ Գ. Դերիկյանին հայտնի էր, որ Նապոլեոն Բոնապարտը Եգիպտոս կատարած արշավանքի ժամանակ, այցելել է ժանտախտով հիվանդ մահամերձ զինվորներին՝ անտեսելով այդ մահացու հիվանդությամբ վարակվելու վտանգը: Ահա նույն էլ արել է շատ դարեր առաջ Աբգարը՝ Եդեսիայի հայ թագավորը:

Գ.Դերիկյանը պատմաբան է և շատ լավ գիտի, որ Եդեսիան չի եղել Մեծ Հայքի մասը, սակայն ստուգապես հայտնի է, որ առաջին դարում Եդեսիայի թագավորությունը եղել է հայկական: Նա իր ընթերցողի համաար նոր օրերում բացում է հայոց պատմության հնագույն էջերը, մանավանդ, որ այդ էջերը կապված էին համաշխարհային պատմության հետ: Աբգարն առնչվում էր Հռոմին, Պարսկաստանին, Հրեաստանին: Նա ներգործում էր պատմական դեպքերի ընթացքի վրա:

Աբգարի թշնամիներից մեկն էր Նոր կտակարանի հայտնի դեմքերից Պիղատոսը, որն իմանալով Հիսուսի անմեղության մասին՝ նրան հանձնում է ամբոխի դատաստանին. «Երբ հավաքվեցին, Պիղատոսը նրանց ասաց. «Այս երկուսից որի՞ն էք ուզում, որ ձեզ համար արձակեմ. Հեսու

Բարաբբայի՞ն, թե՞ Հիսուսին՝ Քրիստոս կոչվածին», - քանի որ Պիղատոսը գիտեր, որ նախանձից մատնել էին նրան»:¹⁵

Ինչպես վկայում է Մովսես Խորենացին, Աբգարի պալատականները Երուսաղեմում իմանում են Հիսուս Քրիստոսի հրաշագործությունների մասին՝ մեռածների վերակենդանացում, կույրերին աչքի լույսի պարգևում, բորոտներին այդ հրեշավոր ախտից կատարյալ բուժում: Բոլոր ավետարանիչները տարբեր ձևերով պատմում են Հիսուսի կողմից բորոտների բուժման փաստերի մասին: Բոլոր վկայություններում կա նույն հիմքը՝ բուժվողները հավատում են Հիսուսին, և այդ հավատն էլ փրկում է նրանց. «Երբ նա իջավ լեռից, նրա ետևից շատ ժողովուրդ գնաց: Եվ ահա մի բորոտ¹⁶ մոտենալով՝ նրան երկրպագում էր ու ասում. «Տե՛ր, եթե կամենաս, կարող ես ինձ մաքրել»: Հիսուս իր ձեռքը երկարեց, հասցրեց նրան և ասաց. «Կամենում եմ, մաքրվի՛ր»: Եվ իսկույն բորոտությունը նրանից մաքրվեց: Եվ Հիսուս նրան ասաց. «Չգու՛յշ եղիր, ոչ ոքի չասես, այլ գնա՛ դու քեզ ցույց տուր քահանային

¹⁵ Մատթեոս, իէ, 17-18:

¹⁶ Բորոտ-բորոտ մարդ: Բորոտներին կղզիացնում էին առանձին տներում և արգելում էին հաղորդակցվել ուրիշ մարդկանց հետ, որպեսզի չվարակեն: Բորոտների առանձնատները Հայաստանում կոչվում էին ուրկանոց և զօդեաց տուն (Տե՛ս Ստ.Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ.1, Ա-Ե, Էջ 388):

և մատուցիր Մովսեսի հրամայած ընծան՝ նրան իբրև վկայություն»:¹⁷

Դերիկյանը գեղարվեստի խոսքով ներկայացնում է հատկապես Աբգար արքայի վերաբերմունքը Հռոմի գերիշխող դիրքի նկատմամբ: Հռոմը գրավում էր շեներ, քաղաքներ և այդ նվաճումներն իրականացնում էր վարձկան զորքի միջոցով. «Եվ զինվորները չունեն հայրենիքի զգացողություն ու սեր, քանզի օտար են, իսկ վարձու և օտար կովողի համար ի՞նչ հայրենիք: Դրամով պաշտպանածն ի՞նչ հայրենիք»:¹⁸

Հռոմի պատրիկների վարքագիծը հակոտնյա էր քրիստոնեական կրոնի ուսմունքին. վերջինս դեմ է ամեն տեսակի ցովություն: Ահա թե ինչ ենք կարդում Ավետարանում. «Վարդապետ, օրենքի մեջ ո՞ր պատվիրանն է մեծ»: Եվ Հիսուս նրան ասաց. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով: Այս է մեծը և առաջին պատվիրանը, և երկրորդը՝ սրա նման է. պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը: Այս երկու պատվիրաններից են կախված ամբողջ օրենքը և մարգարեները»:¹⁹

Հիսուսի վարդապետությունը մերժում է Հռոմի պատրիկների կենցաղը. այդ նույնը մերժում է նաև Գևորգ Դերիկ-

¹⁷ Մատթեոս, Ը, 1-4:

¹⁸ Գ.Դերիկյան, Պատմվածքներ, էջ 8:

¹⁹ Մատթեոս, ԻԲ, 36-40:

յանը: Միաժամանակ նա ընթերցողին ծանոթացնում է Հիսուսի ապրած ժամանակահատվածի Հռոմի իշխող դասի վարք ու բարքին: Պատմաբանի իմացությամբ գրողը պատկերում է հին Հռոմի ֆորումը, հաղթական կամարը, որով անցնում էին օտար երկրներ նվաճած զորահրամանատարները՝ ընդունելով աջ ու ձախ կողմերում կանգնածների ողջույնները:

Աբգար թագավորը Օգոստոս կայսրից առաջարկ է ստանում մնալ Հռոմում և ավելացնել հին աշխարհի հզոր մայրաքաղաքի փառքը. «Եվ անպարտելի Աբգար Հայոց թագավոր էին ասել ու եթե ատել էին արտաքուստ, ապա ներքուստ՝ հարգել: Տեսել էր գերիներին ճամփաներին, որ քայլում էին շղթաները գնզգնզացնելով, տեսել էր ստրուկների, որոնք թիավարում ու թիավարում էին ռազմանավերը և թե զբոսանավերը»:²⁰

Հին Հռոմի արատավոր երևույթներից էին գլադիատորների մրցումները, որոնք ընթանում էին երբեմն ամեհի գազանների, երբեմն ուրիշ գլադիատորների հետ:

Պատմվածքում հեթանոսական կենցաղավարության տեսարանները հաջորդում են մեկը մյուսին՝ ներկայացնելով հին Հռոմի իրական պատկերը. «Ահա նոր գլադիատորներ մտան ասպարեզ և առաջ գալով դեպի Կեսարի օթյակը՝ գոչեցին բարձրաձայն.

²⁰ Գ. Դերիկյան, Պատմվածքներ, էջ 12:

Ավել՝ Կեսար իմպերատոր,
Ողջու՛յն Կեսար, ինքնակալ,
Մահվան դատապարտվածները
Ողջունում են քեզ...»²¹

Հռոմի տեսարանները, որոնք հիշողությամբ վերականգնվում էին Աբգար թագավորի հոգում, անգամ ծանր հիվանդությունից հուսահատված, նա չէր ավստսում Հռոմի արքունիքից ինքնակամ հեռանալու և իր հայրենիքի բախտը տնօրինելու համար:

Պատմվածքի ավարտի հատվածները լիովին քաղված են պատմահոր «Հայոց պատմությունից»:

Գ.Դերիկյանն իր պատմվածքը գրել է 1995-ին, երբ նորանկախ Հայաստանը կամաց-կամաց թոթափում էր արցախյան պատերազմի մղձավանջային տարիների դժվարությունները և բուժում Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ծանր վերքերը: Այդ պահին հայ ժողովրդին հարկավոր էր մեծ հավատ, այնպիսի հավատ, որ իր ժողովրդին ուժ տար ամբողջովին ապաքինվելու:

Աբգար թագավորը նամակ է գրում փրկչին, որում ասում է. «Լսել եմ քո մասին և այն բժշկությունների մասին,

²¹ Նույն տեղում, էջ 15:

որ կատարվում են քո ձեռքով առանց դեղերի և արմատների, որովհետև ինչպես ասում են, դու կույրերին տեսնել ես տալիս, կաղերին քայլեցնում ես, բորոտներին մաքրում ես, չար ոգիները և դևերը հանում ես և առհասարակ երկարատև հիվանդություններով չարչարվողներին բժշկում ես, նաև մեռածներին կենդանացնում ես: Երբ այս ամենը քո մասին լսեցի, մտքումս դրի այս երկուսից մեկը – կա՛մ դու աստված կլինես, որ երկնքից իջել ես և այս բաներն անում ես, կամ աստծու որդի կլինես, որ այդ անում ես: Այդ պատճառով քեզ գրեցի, աղաչելով, որ նեղություն կրես, գաս ինձ մոտ և բժշկես իմ ունեցած հիվանդությունը: Նաև լսեցի, թե հրեաները քեզանից տրտնջում են և ուզում են քեզ չարչարել, բայց ես մի փոքր և գեղեցիկ քաղաք ունեմ, որ երկուսիս էլ բավական է»:²²

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» այս հատվածները անմիջական կապ ունեն Ավետարանի հետ ու արտացոլում են Հիսուսի վարդապետության որոշ դրույթներ, միաժամանակ նրա կյանքի ու գործերի որոշ կողմերի լուսաբանումն են:

Գևորգ Դերիկյանն իր պատմվածքն ավարտում է Աբգար թագավորի ապաքինումով, որի երաշխիքը իր հաստատուն հավատն է առ Հիսուս, ու դա գիտի հենց Քրիստոսը,

²² Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 175:

որն Աբգարին պատասխան թղթում գրում է. «Երանի նրան, ով ինձ հավատում է, թեպետ տեսած չլինի: Որովհետև իմ մասին այսպես է գրված, թե որոնք ինձ տեսնում են, ինձ չեն հավատա, իսկ որոնք չեն տեսնում, կհավատան ու կյանք կգտնեն»:²³

Հայաստանը առաջին քրիստոնեական երկիրն է աշխարհում, սակայն այսօր էլ մեր ազգի մեջ կան հավատի մեջ թույլ մարդիկ, որոնք հոգեորսության հետևանքով հարում են զանազան կործանարար աղանդների՝ քայքայելով ազգային միասնությունը:

Չմոռանանք, որ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը ապագայում գալիք ամեն հայ սերնդի պատգամում էր. «...Ձեզ եմ ասում՝ ձեզ հայոց նորահաս երիտասարդք, ձեր անունին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցեք, ձե՛ր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցեք»:

²³ Գ. Դևրիկյան, Պատմվածքներ, էջ 20:



ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Հայաստանի ազգային գրադարանի
Մատենագիտության և
գրադարանագիտության բաժնի վարիչ,
բանասիրական գիտությունների
թեկնածու*

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հայ գրականության պատմության մեջ, տարբեր դարաշրջանների կտրվածքով, յուրաքանչյուր գրողի ստեղծագործության անբաժանելի մասն է հրապարակախոսությունը, որը տվյալ գրողի խոհերի, պատկերացումների, տարբերելությունների տրամաբանական վերլուծության, դիտողությունների և դատողությունների ամբողջացումն է: Հրապարակախոսության մեջ արտացոլված տեսական պատկերացումները գեղարվեստական մարմնավորում են ստանում այդ գրողի ստեղծագործության մեջ: Ուրեմն, հրապարակա-

խոսությունը կարելի է համարել նաև ցանկացած գրողի ստեղծագործության վերլուծության բանալին:

Գ. Դերիկյանի հրապարակախոսությունը նրա ստեղծագործության ենթաշերտերն ուսումնասիրելու լավագույն հենակետն է: Գրողը տարիներ շարունակ հանդես է եկել մամուլում («Գրական թերթ», «Հայաստան», «Դպրություն», «Սովետական գրող», «Երեկոյան Երևան», «Ավանգարդ» և այլ պարբերականներում) ժողովրդի արարումը և փառապանծանցյալը ներկայացնող հրապարակախոսական հոդվածներով՝ նպաստելով հայ ժողովրդի ապագայի կերտման համընդհանուր գործին:

Երբ համեմատում ենք Գ. Դերիկյանի 1980-ական և 1990-ական թվականներին գրած հոդվածները, գաղափարական կտրուկ անցումներ չենք տեսնում: Սա պատճառաբանվում է նրանով, որ գրողի համար ելակետը միշտ եղել է իր ժողովուրդը, նրա անցյալը, ներկան ու ապագան, նրա հոգսերն ու խնդիրները, գաղափարներն ու պատկերացումները: Ինքը, լինելով իր ժողովրդի հարազատ զավակը, երբեք չի շեղվել իրեն ի վերուստ տրված ուղուց և չի հեռացել իր արմատներից: Ահա ինչու Գ. Դերիկյանի հրապարակախոսության և ստեղծագործության միջև գաղափարական կտրուկ վայրիվերումներ չկան: Սա խոսում է գրողի գրական հաստատուն պատկերացումների մասին:

Համահունչ լինելով իր դարաշրջանին՝ արձակագիրը կարողացել է ժամանակի հևքը զուգահեռել անցյալի պատմական փաստերին և գտնել այն ոսկե միջինը, որն ընթերցողին կնեկայացնի բոլոր ժամանակներում հայ ժողովրդի, ինչպես նաև ընդհանրապես մարդկության համար արդիական հնչեղություն ունեցող հիմնահարցերը և վեհ գաղափարները: Առանձնացնենք հատկապես հայրենասիրության գաղափարը, որով շնչում է գրողի թե՛ արձակը, թե՛ հրապարակախոսությունը:

Հայրենասիրության թեման Գ. Դերիկյանի հրապարակախոսության մեջ միակողմանի չի մեկնաբանված: Թեմայի որոնումները նրան տանում են դեպի անցյալ, հետո ներկա՝ հնարավորություն տալով նրան անցյալը կամրջել ներկային: Անցյալի ու ներկայի այս շաղկապումը Գ. Դերիկյանի ստեղծագործության առանցքն է: Նրա դավանած հայրենասիրությունը վերացական հասկացություն չէ: Այն խիստ իրական է, տեսանելի և շոշափելի՝ հենված կոնկրետ փաստերի ու վերլուծությունների վրա: Սա կարևոր է՝ հասկանալու համար, որ գրողը չի հեռացել իրականությունից, և իր ստեղծագործության մեջ արտացոլած գաղափարները կյանքից ու պատմությունից քաղված դրվագներ են: Հայրենասիրություն գաղափարի լավագույն բնորոշումը տալիս է հենց ինքը հեղինակը իր «Հայրենասիրություն» հոդվածում. «Հայրենասիրու-

թյուն: Սա նվիրվածությունն է հողին, լեզվին, մշակույթին, նախնիների ստեղծած-ավանդածին»¹: Ըստ հեղինակի՝ հայրենասիրությունը միշտ ու մշտապես եղել է մարդկային ամենաուժեղ և ամենավեճ զգացմունքը, որը հարստացնում է հոգին, ուժ տալիս ապրելու և պայքարելու, մարդ անհատին դարձնում է քաղաքացի, խորհող ու մտածող, դարձնում է հոգատար ու անհանգիստ: Այս վեճ բառն արտասանելու իրավունք ունի միայն նա, ում խոսքն ու գործը ծառայել են այդ նույն հայրենիքի փառքի ու արժանապատվության տարածմանը բոլոր ժամանակներում:

Հայրենասիրություն զգացմունքի խորքում Գ. Դերիկյանը մի քանի տարրերի ամբողջությունն է տեսնում, որոնց շղթայական կապվածությունը ի ցույց է դնում բառի վեհությունը: Մխրանքը, հերոսական արարքը, պատվի զգացողությունը, նվիրվածությունը, սերը, կամքի ուժը: Յուրաքանչյուր տարրի մեջ նա մարդկային հոգու և մտքի մի մասնիկն է առանձնացնում, իսկ բոլորը միասին դառնում են մի մեծ զգացմունք, որը բոլոր ժամանակներում կոչվել է հայրենասիրություն: Որպես իր խոսքերի ապացույց՝ Գ. Դերիկյանը պատմական փաստերի համեմատություններով և զուգահեռներով վկայակոչում է հայ ազգի մեծագույն որդիներին՝ Ռաֆ-

¹ Դերիկյան Գ., Հայրենասիրություն, տե՛ս «Սովետական դպրոց», Երևան, 1986, թ. 19, 8 մայիսի, էջ 3:

ֆուն, Մ. Նալբանդյանին, Վ. Տերյանին, Ավ. Իսահակյանին, որոնք որդիաբար մեծարել են հայրենիքը, իսկ իրենց պարտականությունը հայրենիքի հանդեպ դիտել են իբրև գերագույն սրբություն: Նրանց պատգամների շարունակողն է հրապարակախոսը. «...ոչ թե սուկ սիրել հայրենիքը, այլ լինել նրա մարտիկը, նրա ճակատագրից անբաժան լինել կյանքի բոլոր օրերին, հատկապես հայրենիքի դժբախտության օրերին, սեփական շահը ստորադասել հայրենիքի շահին, ամեն ինչ զոհել հայրենի երկրի սիրուն»²:

Գ. Դերիկյանի հրապարակախոսության մեջ հայրենասիրության զգացմունքը արտացոլվում է տարբեր ձևաչափերով: Ներկայի ու անցյալի փոխշաղկապվածության գաղափարախոսությունը մասնատվում է տարբեր մասնիկների միջև՝ հնարավորություն տալով գրողին դրսևորել իր զգացմունքը տարբեր ձևերով: Յուրաքանչյուր մասնիկ կամ գործոն իր էական նշանակությունն է ունենում հայրենասիրություն գաղափարի կերտման գործընթացում:

Առանձնացնենք հատկապես պատմական փաստը՝ որպես դերիկյանական հայրենասիրության կարևորագույն տարր, որը լավագույնս դրսևորվել է «Հույս» ծավալուն հոդվածում: «Հու՛յս, այն վերափոխում է մարդուն, ուժ ու կորով

² Դերիկյան Գ., Հայրենասիրություն, տե՛ս «Սովետական դպրոց», Երևան, 1986, թ. 19, 8 մայիսի, էջ 3:

տալիս, դիմանալու և մաքառելու գործություն ներարկում³», - այսպես է սկսում հեղինակն իր հոդվածը: Այն շրջանում, երբ հայ ժողովուրդը թրծվում էր պատերազմի բովում, Գ. Դերիկյանի հրապարակախոսությունն ամուր հենք էր՝ գոյատևման պայքարում ճիշտ կողմնորոշվելու և ապագայում անցյալի սխալները չկրկնելու համար: Նա պատմական հենքի վրա ցույց է տալիս այն դրական ու բացասական գործոնները, որոնք էական ազդեցություն են ունեցել պատմական իրադարձությունների վրա, վկայակոչում է այն բոլոր հեղինակներին, հին և միջնադարյան շրջանի իմաստուններին, որոնց համար հույսը ապրելու միջոց է եղել, այն բոլոր հայոց արքաներին, որոնք պայքարել են ժողովրդի, հայրենի հողի համար և ձեռք բերել պատվաբեր հաղթանակը: Հրապարակախոսի կարծիքով հույսը եղել է այն գորեղ միջոցը, որը հաղթել է բոլոր դարերի թշնամիներին և որի օգնությամբ հայ ժողովուրդը տեր է կանգնել իր հողին, երկրին, ներկային ու ապագային: Արձակագիրը հույսի փիլիսոփայական մեկնաբանման քողի ներքո ընթերցողին ուղեկցում է պատմության խորքերը և դրվագ առ դրվագ բացահայտում պատմական անցյալը՝ իր դժվարություններով, հաղթանակներով, հերոսական էջերով: Վեր է հառնում նաև հայ դարավոր

³ Դերիկյան Գ., Հույս..., տե՛ս «Հայաստան», Երևան, 1993, թ. 4, 12 հունվարի, էջ 1:

մշակույթը, որի մասին Գ. Դերիկյանը միշտ խոսում է ակնածանքով: Հայ մշակույթի հսկաների մասին խոսելիս նա պարբերաբար չափածո մեջբերումներ է անում և յուրաքանչ-յուր պատմական կերպար միախառնվում է հույսի դերիկյանական գաղափարախոսությանը: Ի վերջո նա հասնում է ներկային, իսկ ներկան պատերազմն է, շրջափակումը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը: Հույսի և հուսախաբության պայքարում հաղթում է հույսը և հեղինակի նվիրական իդձը. «Կառուցողները նախ խաղաղություն են խնդրում Բարձրյալից, ապա շենություն Աշտարակին... Այսպես է եղել հայ մարդը ու տա Աստված, որ այսպիսին էլ մնա՝ իր անձնական տագնապներով, ուրիշի բախտին նախանձախնդիր և գալիքի հանդեպ մեծ հույսով»⁴:

Որպես հայրենասեր գրող՝ տարբեր ժամանակներում Գ. Դերիկյանն իր ուշադրության կենտրոնում է պահել Հայոց եղեռնի ցավոտ հարցը: Սա ևս պատմական փաստ է, որին անդրադառնալը ցանկացած գրողի սուրբ պարտականությունն է: Այս թեմայով գրված վերլուծություններից հատկապես առանձնացնենք 1998 թ. տպագրված «Արդարության

⁴ Դերիկյան Գ., Հույս..., տե՛ս «Հայաստան», Երևան, 1993, թ. 4, 12 հունվարի, էջ 1:

դրոշակակիրները» հոդվածը⁵: Վերլուծելով պատմական փաստերը՝ նա հանգում է մի պարզ ճշմարտության. հայոց հողի պաշտպանը հայ ժողովուրդն է: Ուրիշ ոչ ոք չի զգա այդ ցավն այնպես, ինչպես հայր: Եվ որպես հատուցում՝ հնչում է վրեժի պահանջը, կոչը, որի կրողներն են դառնում Սողոմոն Թեհլերյանն ու մյուս վրիժառուները, որոնց մասին գրում է. «Հանուն վրեժի գործած մեր խիզախ ահաբեկիչները միշտ հիշելի անուն կմնան ազատագրական պայքարի ու Հայ դատի, հայրենի ժողովրդի բազմադարյան պատմության մեջ որպես արդարության պաշտպանության մարտիկներ»⁶:

Պատմական փաստերի հիմքի վրա են ստեղծված նաև «Արության և տոկունության դասեր», «Էջմիածին՝ տաճար Առաջին», «Արյամբ օծուն և հավատով», «Դարերի հիացմունքին արժանի» և այլ հոդվածներ, որոնց մեջ Գ. Դերիկյանի փիլիսոփայական մտքերը հայրենիքի, հայրենի հողի վերաբերյալ շաղախված են պատմական անհերքելի փաստերով: Հատկապես առանձնացնենք «Խաչապաշտ հող-1700» հոդվածաշարը, որը տպագրվում էր «Հայաստան» թերթում և որի յուրաքանչյուր դրվագը պատմական կոնկրետ իրադարձության արտացոլումն էր:

⁵ Դերիկյան Գ., Արդարության դրոշակակիրները, տե՛ս «Հայաստան», Երևան, 1998, թ. 49, 30 հունվարի, էջ 3:

⁶ Նույն տեղում:

Գրողի հայրենասիրության մյուս կարևոր դիտակետը իրականությունն է՝ իրադարձությունների շղթակայական հաջորդականությամբ: Գ. Դերիկյանն այն գրողներից է, որոնք իրենց ժամանակաշրջանի ոգին են: Հատկապես 1980-1990-ական թվականների անցումային բարդ ժամանակահատվածում նա կարողացավ ճիշտ ըմբռնել ժամանակի ոգին, ժողովրդի պահանջները և այդ ամենն արտացոլել մամուլում տպագրված իր հրապարակախոսական հոդվածներում: Պատմական «Հույս» հետաքրքիր հոդված-ակնարկից հետո Գ. Դերիկյանը նույն թվականին տպագրում է «Անգլուխ ժամանակներ և գլխավոր փորձադաշտ» հոդվածը⁷, որն իր բովանդակությամբ, ճիշտ է, տարբերվում է նախորդից, սակայն ընդգծում է հեղինակի հայրենասիրության մեկ այլ կարևոր առանձնահատկություն՝ սերը դեպի իր ժողովուրդը: Ըստ Գ. Դերիկյանի՝ գրողը միշտ պետք է լինի իր ժողովրդի կողքին, պետք է ապրի նրա հոգսերով, կիսի նրա ցավը: Միայն այդ դեպքում նա կկարողանա խոսել հայրենասիրության մասին:

1990-ական թվականների սկզբին հեղինակի պաշտամունքի կենտրոն ժողովուրդը գտնվում էր ծանր վիճակում:

⁷ Դերիկյան Գ., Անգլուխ ժամանակներ և գլխավոր փորձադաշտ, տե՛ս «Հայաստան», Երևան, 1993, թ. 17, 9 մարտի, էջ 1:

Պատերազմի և շրջափակման մեջ հայտնված Հայաստան աշխարհը ներքուստ քայքայվում էր սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից: Մի կողմից հայ ժողովրդի հերոս զավակներն իրենց կյանքն էին զոհում հայրենի հողի համար, մյուս կողմից ապրուստի տարրական պայմանների բացակայությունը խեղդում էր ազատատենչ գաղափարները: Անհրաժեշտ էր ոգևորող խոսք, քաջալերանք, ապագայի հանդեպ կրակի բոցավառում, ինչի տարածողներից էր նաև Գ. Դերիկյանը, ով չհեռացավ, չլքեց իր ժողովրդին, այլ կանգնեց նրա կողքին, սփռվեց ցավերը և հույս ներշնչեց: Գրողի համար հենց սա էր հայրենասիրությունը: Իր հողվածում նա ներկա ծանր պայմաններին հակադարձում է անցյալի հերոսական էջերի մանրամասները՝ ցույց տալով մարդկային հոգու ստրկացումը: Արցախյան պատերազմի բարձր գաղափարների ներքո կենցաղի մանրացմամբ հեղինակը նկարագրում է ժողովրդի վիճակը, բայց չի բավարարվում միայն այդ նկարագրությամբ: Նա փորձում է գտնել ելքը, մատնացույց է անում ուղիները, որոնք ժողովրդին կտանեն ավելի լուսավոր հորիզոններ՝ ներշնչելով հույսի ու լավատեսության գաղափարներ:

1990-ական թվականների սկզբին տպագրվում են իրականությունն արտացոլող մի շարք հողվածներ՝ «Դրսից ու ներսից», «Իսկ վաղը ուշ կլինի», «Հանուն մեծ ազատամար-

տի» և այլն: Բոլոր հողվածներում Գ. Դերիկյանի մտահոգությունը նույն է՝ թեթևացնել իր ժողովրդին պատուհասած ցավը, հնարավոր բոլոր ուղիներով օգնել նրան: Որոնումների ընթացքում ծնվում են նաև դատապարտող խոսքեր՝ ուղղված անիշխանությանը, որը, ըստ նրա, հայրենի հողի ամենամեծ դավաճանությունն է: Անիշխանությունը նա համարում է կորստաբեր, բոլոր տեսակի դժբախտությունների և հիասթափությունների պատճառ: Այն ժողովուրդը, որի զավակները իրենց արյունն են տալիս Արցախյան ազատամարտում, միևնույն ժամանակ տառապում են անիշխանության ճիրաններում: Հերոսության և ստորության կիզակետում հայտնված ժողովուրդը շփոթմունքի մեջ է և չի կարողանում գտնել այն կետը, որը լույսի և հույսի ճանապարհ կբացի իր համար: Գ. Դերիկյանն իր առջև խնդիր է դնում՝ ցույց տալ այդ լուսավոր կետը, իսկ դա, նրա կարծիքով, սերն է, համախմբվածությունը, նվիրվածությունը սեփական հողին, ընտանիքին ու հայրենիքին:

Գ. Դերիկյանի հայրենասիրության առանցքը հայոց պետականության վերականգնման և պահպանման պատմական փաստն է: Հայոց անկախ պետականության վերականգնման գաղափարի ծիլերը նշմարվում են նրա հրապարակախոսության մեջ դեռևս 1980-ական թվականների վեր-

ջից: Իսկ 1990-ական թվականների սկզբին անկախության գաղափարը, որպես սևեռուն միտք, թևածում է նրա ողջ ստեղծագործության մեջ: «Անկախություն՝ տենչանք-նպատակը մեր», «Զոհվողները և վայելողները», «Այդ հպարտ բառը՝ անկախություն», «Արցախական աշխարհի նվիրյալները» և այլ հոդվածներում մասնակի կամ ամբողջական նա վերլուծում է անկախության և հայոց պետականության կարևորությունը հայ ժողովրդի կյանքում: Առանձնացնենք հատկապես «Այդ հպարտ բառը՝ անկախություն» հոդվածը, ուր նա լավագույնս է ներկայացնում հայոց պետականության վերականգնման դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Հոդվածը գրված է 20-րդ դարավերջի իրադարձությունների տպավորությունների ներքո: Քաջ գիտակցելով անկախության պատմական նշանակությունը՝ հեղինակը այդ կարևոր իրադարձությունը համեմատում է Կիլիկիայի հայոց պետության ստեղծման և Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման պատմական փաստերի հետ՝ համոզված լինելով, որ «... պատմությունն է շարունակում մեր ապագան ու գալիքը»⁸: Հայոց պետականության և անկախության Հռչակագրով հայ ժողովուրդը տեր է կանգնում իր արժանապատվությանը, երկրին, իր հողին ու լեզվին:

⁸ Դերիկյան Գ., Այդ հպարտ բառը՝ անկախություն, տե՛ս «Գրական թերթ», Երևան, 1990, թ. 36, 31 օգոստոսի, էջ 1:

Հնչում է հեղինակի կոչը՝ իբրև պատգամ՝ ուղղված ապագա սերունդներին՝ գործով սատարել նորանկախ պետությանը՝ անկախ կուսակցական տարաձայնություններից, օգնել ու նպաստել նրա բարգավաճմանը:

Գ. Դերիկյանի հրապարակախոսության եզրերը անձայրաձիբ են, թեման՝ ընդգրկուն ու անվերջանալի: Որպես ամփոփում՝ կարող ենք փաստել, որ հեղինակն իր ողջ կյանքը, ստեղծագործությունը, իր բեղուն գրիչը ծառայեցրել է հայ ժողովրդին՝ վեր հանելով անցյալի կարևոր փաստերը, շաղկապելով դրանք իրականությանը և ուղի հարթելով ապագայի համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան	3
2. Preface	5
3. Предисловие	7
4. Ա.Դոլուխանյան ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ «ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԸ» ԳՐՔԻ Ա ՀԱՏՈՐԸ	9
5. Լ.Հովսեփյան ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ «ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ» ՎԵՊԸ	22
6. Պ.Սահակյան ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ «ՎԻՐԱՎՈՐ ԿՌՈՒՆԿ» ՎԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	38
7. Ռ.Դոլուխանյան Գ.ԴԵՎՐԻԿՅԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԵՐԸ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ	58
8. Գ.Մարդյան ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԸՍՏ Գ.ԴԵՎՐԻԿՅԱՆԻ «ՀԱՎԱՏԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ» ՊԱՏՄՎԱԾՔԻ	69
9. Մ.Գրիգորյան ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ	82